№ 264 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 № 264

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная уп. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատիղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

Բացված է բաժանորդագրութիւն 1909 թ. համար

ՄՇԱԿ

(37-րդ ՏԱՐԻ)

ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՁԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հասցէն՝

ТИФЛИСЪ, редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամսվայ համար	» »	10 ռ.
11 »	» » »	»
10 »	» » »	9 ռ.
9 »	» » »	8 ռ.
8 »	» » »	7 ռ.
7 »	» » »	6 ռ.
6 »	» » »	»
Մնացած ամիսները ամսական		Մէկ ռուբլի
Ամերիկա տարեկան	»	6 դոլլար
Եւրոպա	»	30 ֆրանկ
Պարսկաստան	»	10 ռուբլի
Թիւրքիա	»	120 ղուռշ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ (հին բաժանորդներից խնդրվում է ուղարկել նախկին տպագրված հասցէն).

Կիրակի, Նոյեմբերի 30-ին, Վանքի աւագ եկեղեցում ս. պատարագից յետոյ կատարվելու է հոգեհանգիստ հանգուցեալ

ԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ եւ ԱՒԵՏԻՍ ԲԱԼԱՅԵԱՆ
ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ

որի մասին յայտնվում է ազգականներին և բարեկամներին:
Պատարագի սկիզբն է 10½ ժամին, իսկ հոգեհանգիստինը 12 ժամին:
2—1

Դեկտեմբերի 23-ի յօբելեանի առիթով
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
25-ԱՄԵԱԿ „ԱՂԲԻՒՐ" ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ
Լ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ, Ա. „ԱՂԲԻՒՐԸ" 25 ՏԱՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Կազմեց Նար-Դոս, բժշկապետ Բ. Նաւասարդեանի առաջարանով
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և յօբելեանական յանձնաժողովի նախագահ բժշկապետ Բ. Նաւասարդեանին՝ Առաջին մասնաւոր հիւանդանոց:
(շ. ե. հ.) (առ.) 10—4

ԹԻՖԼԻՍԻ

ՀԱՅ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

անդամները առաջիկայ կիրակի, ամսիս 30-ին, երեկոյեան ժամը 7-ին, Կովկասի Կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան գահլիճում հրաւիրվում են արտակարգ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

որի զբաղման նիւթ լինելու են.

ա. Մի քանի ընթացիկ խնդիրների մասին վարչութեան գործունէութեան վերաբերեալ զեկուցումը.

բ. Ընկերութեան կանոնադրութեան մի քանի կէտերի փոփոխութեան քննութիւնը.

և գ. Ընկերութեան ձեռներէցութեամբ բացված ջուլհակութեան արհեստանոցների գոյութիւնը ապահովեցնելու խնդիրը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԴԻՄՈՂ ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Բերլինում հիմնվել է վերջին կուրսերի հայ-բժիշկ ուսանողներից բաղկացած մի բիւրօ, որի նպատակն է աջակցել արտասահման գնող հայ հիւանդներին ամեն տեսակի խորհուրդներով և առաջնորդել նրանց համապատասխան մասնագէտների մօտ:

Հասցէ՝ Berlin, Philipp strasse № 13 a, Bertold, für A. A. կամ Charlottenburg, Knesebeckstr. № 17, Mauerhoff, für Dr.
(ու.) ա. 3—1

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Շատ տեղերից մենք ստանում ենք առաջարկութիւն կազմակերպելու այնտեղ «Մշակի» հատավաճառութիւնը: Առաջարկողները ասում են, որ իւրաքանչիւր օր հինգ կոպէկ վճարելը այնքան թեալի և դժուար չէ, որքան տարեկան բաժանորդագնի միանգամից հատուցանելը:

Անշուշտ՝ ոչինչ չունենք առարկելու լրագրի հատավաճառութեան դէմ: Սակայն նրան կազմակերպելը ներկայումս հնարաւոր է միայն մի քանի կենտրօնական քաղաքներում:

Մեծամասնութեան համար միայն բաժանորդագրական ձևը:

Եթէ ընթերցանութիւնը շատ տարածված լինէր մեզանում և լրագիրը գարձած լինէր անհրաժեշտ պարագայ իւրաքանչիւր ընտանիքի մէջ, այն ժամանակ ամեն մի բազմամարդ կէտում կարելի կը լինէր գործակալութիւններ ստեղծել և ապահով կերպով ուղարկել լրագրի տասնեակ և հարիւրաւոր օրինակներ, յուսալով որ նրանք կը սպառվեն:

Այդ դեռ չը կայ մեզանում:

Լրագիր ստացողները անհատներ են և նրանք էլ նայում են լրագրի համար արած ծախքի վրա՝ իբրև մի շռայլութեան վրա: Միւս կողմից փորձը ցոյց տուեց, որ հատով գնողների թիւը շատ փոփոխական է. յանկարծ նա բարձրանում է և յետոյ իջնում զգալի կերպով, մի քանի ժամանակից յետոյ դարձեալ բարձրանում: Եթէ հատավաճառը նախօրօք կարողանար գուշակել պահանջը և նրա համեմատ էլ պատրաստէր լրագրի օրինակների հարկաւոր քանակը, անշուշտ հնարաւորութիւն կունենար բաւարարութիւն տալ պահանջին, բայց որովհետև այդ անկարելի է, իսկ նա չէ ուզում իր ձեռքին ունենալ չը վաճառված համարներ, ուստի նա պատուիրում է այն նուազագոյն քանակը, որը կարող է անպատճառ սպառվել:

Մեր իրականութեան պայմանները թոյլ չեն տալիս զարգացնել հատավաճառութիւնը այն չափով, որ ցանկալի է:

Ուստի պէտք է գերադասել բաժանորդագրութիւնը, որը հաստատ է և որոշ թէ ընթերցողների և թէ խմբագրութիւնների համար:

Բաժանորդագրութեան աջող ընթացքը հնարաւորութիւն է տալիս լրագիրներին լաւագոյն կերպով կազմակերպելու հրատարակութեան գործը, իսկ հատավաճառութիւնը ստեղծում է պատահականութեան ենթարկված մի դրութիւն: Միևնոյն ժամանակ բաժանորդի համար լրագիրը վերջիվերջոյ շատ աւելի էժան է նստում, քան եթէ նա հատով գնէր բոլոր օրինակները ամբողջ տարվայ ընթացքում:

Ոչ միայն մեզանում, այլ և արտասահմանում որոշ տեղերում և դէպքերում գերադասութիւն է տրվում բաժանորդագրական եղանակին, քան հատավաճառութեան: Այդպէս են նայում օրինակ արտասահմանում բանւոր դասակարգի համար հրատարակութիւններ անող խմբագրութիւնները: Նրանց գլխաւոր յոյսը բաժանորդագրութեան վրա է լինում, իսկ հատավաճառութեան վրա նրանք նայում են իբրև յաւելուածական և լրացուցիչ աղբիւրի վրա:

Նոյնն է թելադրում և մեր իրականութիւնը:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 25 Նոյեմբերի

Հոկտեմբերեանները հերթից հանել են Կովկասի մասին արված հարցանդումը:

Պ. Ա. Ստոլիպինը իր մօտ գումարում է Դումայի մեծամասնութեան լիդերների խորհրդակցութիւն՝ նրանց համախմբելու նպատակով:

Գեներալ Բատանովը «Гол. Правды» լրագրում առաջարկում է հրաւիրել մի մասնաժողով պետական հայեցքներով առաջնորդվող մարդկանցից, քննելու Կովկասին վերաբերվող առաջնակարգ խնդիրները—փոխարքայութիւնը վերացնելու կամ բարեփոխելու մասին, գեներալ նահանգապետութիւնների բաժանելու, զինուորական ծառայութեան ու ինքնուրոյն շրջանային խորհուրդ կազմելու հարցերը, սահմանափակելով, դրա փոխարէն, մինչև մինիմումի Կովկասի պատգամաւորների թիւը Պետական Դումայում: («Б. З.»)

Կ. Պոլիս, 25 Նոյեմբերի

Սուլթանի և երիտասարդ-թիւրքերի միջև անհամաձայնութիւններ են տեղի ունենում նոր մինիստրութեան ցուցակի առիթով:

Երիտասարդ-թիւրքերը հրաժարվում են ընդունել սուլթանի առաջարկած թեկնածուների ցուցակը, և առաջ են քաշել իրանց կազմած ցուցակը: Համաձայնութիւն առայժմ չը կայ:

Դամասկոսում անկարգութիւններ են տեղի ունենում. մագազինները փակված են, ըէակցիոներները իրանց ձեռքն են ձգել իշխանութիւնը և գադրեցրել պարլամենտական ընտրութիւնները: («Кс.»)

Բելգրադ, 25 Նոյեմբերի

Պաշիչը յայտնել է, որ Իզվոլսկուն և Զինովիէվին հեռացնելը համարում է անհրաժեշտ պայման, որպէսզի սլաւոնականութեան գործը կարողանայ յաղթանակել Բալկաններում:

Սերբը կառավարութիւնը նորից ուղարկել է Ցեսինիէ 300,000 ֆրանկ Զերնոգորիայի սպառազինութեան համար: («Кс.»)

Բելգրադ, 19 Նոյեմբերի

Մինիստր-նախագահ Միլովանովիչը եռանդով պաշտպանում է իր միտքը՝ հողային կոմպենսացիայի մասին, յենվելով բացառապէս այն խօսքերի վրա, որը իբր թէ ասել է Իզվոլսկին, այն մտքով՝ որ Ռուսաստանում անեկսիայի ընդունելը արդէն նախորոշված բան է:

Միլովանովիչի այդ յայտարարութիւնը մեծ զայրոյթ է առաջ բերել Պետերբուրգի քաղաքական շրջաններում:

Բելգրադի «Политика» լրագրում տպագրված է Պետական Դումայի անդամներ Վ. Ա. Բոբրինսկու, Ա. Ա. Ստախովիչի և Ա. Ա. Պիլենկոյի հեռագիրը, որով նրանք անհիմն են անուանում Միլովանովիչի այդ յայտարարութիւնը: Միևնոյն ժամանակ նրանք յոյս են յայտնում ռուսական քաղաքական գործիչների և ռուս ժողովրդի անունից, որ ռուսաց կառավարութիւնը չի վարվի հակառակ ամբողջ ռուս ժողովրդի և սլաւոնականութեան զգացմունքներին ու պահանջներին: («Б. В.»)

Պարիզ, 26 Նոյեմբերի

Պատգամաւորների պալատը 355 ձայնով ընդդէմ 142-ի ընդունեց պատգամաւոր Գրօդիտէի ներկայացրած և մինիստր-նախագահից հաւանութիւն գտած հերթական գործերին անցնելու բանաձևը, որի համաձայն վստահութիւն է յայտնվում կառավարութեանը և համոզմունք արտայայտվում, որ կառավարութիւնը բաւականաչափ երաշխիք ունի աջողութեամբ աւարտելու ծովային բարենորոգումները: («Հ. Գ.»)

Բուդապեշտի «Pester Journal» թերթը խօսելով եւրօպական բարդութիւնների հաւանականութեան մասին, նկատում է. «Եթէ Ռուսաստանը դիմէր զինված միջամտութեան բալկանեան բարդութիւնների ժամանակ և սպառնար Աւստրօ-Ունգարիային պատերազմով, այն ժամանակ Գերմանիան կը դարձնէր կայսրութեան ու Թագաւորի ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ նա, իր դաշնակցական պարտաւորութիւնների համաձայն, ստիպված պիտի լինի պաշտպանել Աւստրիային Ռուսաստանի յարձակումից: Այդ դէպքում Ֆրանսիային ևս վիճակված կը լինէր լուծել՝ օգնել Ռուսաստանին թէ ոչ: Առաջին դէպքում մեծ վտանգի կենթարկվէր այն 13 միլիարդը, որ նա փոխառութիւն է տուել Ռուսաստանին: Ռուսաստանին օգնելուց հրաժարվելը հարուած կը հասցնէր հասարակապետութեանը: Ֆրանսիան ամենամեծ չափով շահագրգռված է պատերազմի խուսափումով»:

Կ. Պոլսի «Շուրայի-Իմմէթ» լրագիրը խօսելով Ռուսաստանի հետ դաշնակցութիւն կայացնելու մասին, նկատում է. «Մենք պէտք է ժողանանք անցեալը. Թիւրքիան ուրախութեամբ արձագանք կը տայ Պետերբուրգից բղխող առաջարկին դաշնակցութիւն կապելու կամ համաձայնութիւն կայացնելու մասին, որ համապատասխան լինեն երկու պետութիւնների շահերին ու արժանապատուութեանը»:

Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ իտալական թագաւորը մտադիր է հանդիսաւոր կերպով տօնել Սոլֆերինօյի ճակատամարտի առաջիկայ 50-ամեայ տարեդարձը, որտեղ Ֆրանսիացիներն ու իտալացիները ջարդ տուին աւստրիացիներին: Հակաաւստրիական տրամադրութիւնը, ինչպէս յայտնի է, ներկայումս սուր կերպարանք է ստանում Իտալիայում, ուստի այդ 50-ամեակի հանդիսաւոր տօնելը կարող է անակնկալ հետևանքներ ունենալ: («Рѣчь»)

Լօնդոն, 25 Նոյեմբերի

Անգլիական լրագիրները հաղորդում են, որ աւստրիական կայսրի ու գահաժառանգ Էրց-հերցոգի միջև յարաբերութիւնները լարվել են: Ֆրանց Յովսէփ կայսրը անեկսիան համարում է գահաժառանգ Ֆերդինանդի քմահաճոյքը:

Կայսերական ընտանիքը պնդում է, որ Ֆերդինանդը հրաժարվի գահաժառանգութեան իրաւունքից յօգուտ իր եղբօր: («Кс.»)

Թէհրան, 26 Նոյեմբերի

Զիլլի-Սուլթանը, որովհետև իր թոռանը տուեց շահի հօրեղբօր որդի Նայբ-ուս-Սալթանէին, իրաւունք ստացաւ վերադառնալ Պարսկաստան:

(«Հ. Գ.»)

Հոլլանդիայում հրատարակվող «Pall Mall Gaz.»-լրագիրը հաղորդում է, որ նիդերլանդական կառավարութիւնը դիմել է անգլիական «Foreign Office»-ին՝ խնդրելով երաշխաւորել նիդերլանդցիների ռազմական անկախութիւնը այն դէպքում, եթէ Գերմանիան գրաւելու լինի թագաւորութեան սահմանները: Լսա երևոյթին, Շվեյցարիայի և Բելգիայի չէզոքութեան մասին գերմանական զինուորական շրջանների արտայայտած հայեացքների նկատմամբ արված վերջին մերկացումները յուզմունք են առաջ բերել զանազան մանր պետութիւնների մէջ: («Рѣчь»)

Պետերբուրգ, 26 Նոյեմբերի

Վասիլեվսկի կղզու վրա գտնվեց կեղծ դրամների ֆաբրիկա: Գտնվեցին կաղապարներ զանազան դրամներ պատրաստելու համար, նաև մօտ 250 հատ պատրաստի դրամներ: Ձերբակալեցին չորս հոգու: («Հ. Գ.»)

Նոյեմբերի 24-ին Բագուի քաղաքային 3-րդ հաշտարար դատարանում քննվել է «Բագուի հրատարակչ. ընկերութեան» յարուցած գործը Կ. Ի. Խատիսեանի և Ս. Տ. Ամիրովի դէմ: Դատարանը որոշել է. պարտաւորեցնել Կ. Ի. Խատիսեանին և Ս. Տ. Ամիրովին «Բագուի հրատարակչական ընկերութեանը» յանձնել, 1906 թուի դեկտեմբերի 16-ին կայացրած պայմանի համաձայն, նոյն ընկերութեան տպարանը իր բոլոր գոյքով ու կահաւորութիւններով և արգելել նրանց օգտվելու «Баку» և «Бак. Извѣстія» հրատարակութիւններից, ստանալով նրանցից յօգուտ «Բագուի հրատարակչ. ընկերութեան» 50 ռուբլի դատաստանական և գործավարական բոլոր ծախքերը:

(«Վ. Ե.»)

Ղօշան, 20 Նոյեմբերի

Երկկ լուր բերին, որ Մէշէդ լուրջ ընդհարումն է տեղի ունեցել անջումանականների և կառավարականների միջև, կան սպանվածներ. բաղարն էլ փակ է: Ինչպէս պատմում են, Նաջաֆից մուշտէյիդները գիմել են Մէշէդի անջումանականներին, որ վերջիններս կոչ անեն ազգաբնակութեան, կառավարութեան հարկ չը տալ և իրանք էլ ամեն ջանք գործ դնեն սահմանադրութիւնը նորից հաստատելու:

Այսօր ինչպէս հաստատ աղբիւրներից տեղեկացանք, Մէշէդի և Խօրասանի ընդհանուր նահանգապետ Բօքնօ-Դօվլէն հեռագրով տեղից դատաւորից ձիաւոր և հեռակ զօրք է պահանջել: Այս լուրը մեծ յուզմունք պատճառեց տեղիս ազգաբնակութեան. ժամը 12-ին խուռն բազմութիւն հաւաքվելով դատաւորի մօտ պահանջում էր ոչ մի հատ զօրք չուղարկել Մէշէդ: Դատաւորն էլ, յուզված ժողովրդի ջղային և տենդոտ տրամադրութիւնը տեսնելով, ստիպված է եղել առաջարկներն յետ վերցնել:

Այստեղ էլ քնած հոգիները կարծես զարթնել են. զգում են, որ պէտք է շարժվել, բայց չը կայ մէկը, որ առաջ անցնէ...

Էլչիբէկ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԹԷ՞ ՊԱՏՐԻԱՐՔ

Կ. Պոլսի թերթերի մէջ երևցած տեղեկութիւնները հնթադրել են տալիս, որ Իզմիրլեան տրքազանը եթէ պաշտօնապէս չը հրաժարվի կաթողիկոսական պաշտօնից, բայց ոչ-պաշտօնական կերպով աշխատում է, որ ամենայն հայոց կաթողիկոս հաստատվի Եղիշէ եպիսկոպոս Դուրեանը:

Ուրեմն մենք, ռուսահայերս, պէտք է ընտրանենք և այն մտքի հետ, որ ամենայն հայոց կաթողիկոս կարող ենք տեսնել ոչ թէ Մատթէոս Իզմիրլեան պատրիարքին, որին մենք ընտրեցինք իբրև արժանաւորագոյն կանդիդատ և դրա համար էլ ընտրեցինք գրեթէ միաձայն, այլ Եղիշէ եպիսկոպոս Դուրեանին, որին մենք ընտրեցինք նոուազագոյն քուէներով:

Առանց ուրանալու Եղիշէ եպիսկ. Դուրեանի բոլոր զովելի և դրական յատկութիւնները, նրա անարատ, մաքուր կեանքը, նրա ժողովրդասիրութիւնը, նրա հմտութիւնը՝ կրթութեան, լեզուագիտութեան և գրականութեան մէջ, մենք պէտք է ասենք այնուամենայնիւ, որ ներկայ հանգամանքներում, մանաւանդ էջմիածնի ներկայ դրութեան մէջ, Իզմիրլեանի կաթողիկոսութիւնը անհրաժեշտութիւն է:

Այն քայքայումից և աւերումներից յետոյ, որ կրեց Էջմիածինը Արիմեանի օրով, կարելի է թաղաւորութեան սահմանները: Լսա երևոյթին, Շվեյցարիայի և Բելգիայի չէզոքութեան մասին գերմանական զինուորական շրջանների արտայայտած հայեացքների նկատմամբ արված վերջին մերկացումները յուզմունք են առաջ բերել զանազան մանր պետութիւնների մէջ: («Рѣчь»)

Պետերբուրգ, 26 Նոյեմբերի

Վասիլեվսկի կղզու վրա գտնվեց կեղծ դրամների ֆաբրիկա: Գտնվեցին կաղապարներ զանազան դրամներ պատրաստելու համար, նաև մօտ 250 հատ պատրաստի դրամներ: Ձերբակալեցին չորս հոգու: («Հ. Գ.»)

Նոյեմբերի 24-ին Բագուի քաղաքային 3-րդ հաշտարար դատարանում քննվել է «Բագուի հրատարակչ. ընկերութեան» յարուցած գործը Կ. Ի. Խատիսեանի և Ս. Տ. Ամիրովի դէմ: Դատարանը որոշել է. պարտաւորեցնել Կ. Ի. Խատիսեանին և Ս. Տ. Ամիրովին «Բագուի հրատարակչական ընկերութեանը» յանձնել, 1906 թուի դեկտեմբերի 16-ին կայացրած պայմանի համաձայն, նոյն ընկերութեան տպարանը իր բոլոր գոյքով ու կահաւորութիւններով և արգելել նրանց օգտվելու «Баку» և «Бак. Извѣстія» հրատարակութիւններից, ստանալով նրանցից յօգուտ «Բագուի հրատարակչ. ընկերութեան» 50 ռուբլի դատաստանական և գործավարական բոլոր ծախքերը:

(«Վ. Ե.»)

դապահութեան, դիսցիպլինայի, օրինականութեան այն խախտումները, որոնք բուն են դրել Էջմիածնում, հայ հոգևորականութեան մէջ, կաթողիկոս պէտք է լինի մեծ հեղինակութիւն ունեցող և ազդող մի եկեղեցական, իսկ ներկայումս միակ հեղինակութիւն վայելող անձն Իզմիրլեանն է։

Եղիշէ եպիսկոպոս Դուրեանը, համեմատած Իզմիրլեանի հետ, չունի ռուսահայ հոգևորականութեան, Էջմիածնի միաբանութեան վրա այն հեղինակութիւնը, որը անհրաժեշտ է բարեկարգութիւն, մտցնելու այժմ մեր եկեղեցական-վարչական կազմի մէջ։

Այդ պատճառով մենք չենք վարանումասել, որ, եթէ, յիրաւի, Իզմիրլեան հրաժարվի կաթողիկոսական պաշտօնից, նա թերացած կը լինի իր պարտականութիւնների մէջ առ ազգը և եկեղեցին։ Եթէ նա որոշել էր չընդունել կաթողիկոսական պաշտօնը, նա պարտաւոր էր այդ մասին յայտարարել կանխօրէն, ընտրութիւնից առաջ։ Նրա հրաժարումն այժմ առիթ կը տայ ընտրութիւնների բեկման, և հայ ազգը ստիպված կը լինի մի տարի ևս սպասել և մի տարի ևս ազգային և եկեղեցական գործերը կը մնան նոյն քայքայիչ և անկերպարան վիճակի մէջ։

Մենք սիրում ենք հաւատալ, որ Իզմիրլեան սրբազանի արտայայտած կարծիքը Դուրեանի կաթողիկոսացման մասին լոկ պլատոնական է եղել, և նա, ինչպէս ինքը ևս քանիցս յայտարարել է, հնազանդվելով ազգի և եկեղեցու ցանկութեան, խոնարհվելով ժողովրդի կամքի առաջ, կը ստանձնէ կաթողիկոսական պաշտօնը, որովհետև ոչ մի կասկած չը կայ, որ ուրուցա կառավարութիւնը կը վաւերացնէ ազգի ընտրութիւնը։

Հ. Առաքելեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփ. թղթ.)

—

Շուշի, 16 նոյեմբերի

Ղարաբաղի թեմի վանական կալուածները գտնվում են յոյժ ցաւալի դրութեան մէջ։ Այդ կալուածները այնքան օգուտ չեն բերում, որ կարելի լինէր ծածկել նրանց ծախսը, այսինքն վճարվէին նրանց թէ պետական 5000 ռուբլուց աւելի հարկերը և թէ նրանց ծառայողների ռոճիկները, մասաւորապէս 3000 ռ.։ Այսօր այդ կալուածները տնքում են 20,000 ռուբլուց աւելի պարքի տակ։ Գանձարանը շարունակ պահանջում է այդ հազարները, բայց չը կայ ոչ մի միջոց վճարելու։ 60,000 դեսեատին ունեցող անտառները, վարելահողերը, արօտատեղերը և հայլաղները միջոց չունեն վճարելու իրանց հարկերը և մօտ ապագայում կը վաճառվի այդ կալուածների մի մասը պարտքի դիմաց։ Ի՞նչ պատասխան կը տայ ազգը, ո՞րպիսի ապաւորութիւն կը թողնի այդ բանը, այդ ապագայի հարց է։

Վանական կալուածների համար նոյնիսկ Թիֆլիսում մի ժողով կազմվեց, ուսումնասիրելու, թէ որպիսի եղանակով բարձրացնեն կալուածների ընկած վիճակը, արդիւնաւորեն նրան, բայց այդ ամենն էլ անցան գնացին, և մեր կալուածները զրաբնվում են նոյն տարտամ վիճակի մէջ։ Ղարաբաղի վանական կալուածներում կայ նոյնիսկ երկանաքարի մի այնպիսի հանք, որ ոչ մի տեղ չը կայ, և պղնձի տակաւին չը շահագործվող շատ հարուստ հանքեր։ Եթէ լինեն այդ կալուածները մի հարուստ ընկերութեան խնամքի տակ, չենք կարծում, որ խոշոր օգուտներ չը տան։ Կայ հանք, կայ և փայտը, Ճում է դրամը, որ շահագործէ դրանց և օգուտներ արտադրէ։

Ընթերցողին աւելի գաղափար կազմել տալու, թէ ինչպէս են կառավարվում այդ կալուածները, յիշենք վերջին ժամանակներից մի օրինակ։

1907 թուում այդ անբաղդ կալուածներին կառավարիչ նշանակվեց պ. Տ. Մատինեանցը, մասնագէտ, հմուտ և ուսումնական անձն, բայց դժբաղդութիւնը այն էր, որ պ. Մ. տկար անձը լինելով՝ մտադրվեց Շուշի քաղաքում նստած կառավարել այդ կալուածները և խնդրեց կօնսիստորիայից հաստատել իր օգնական Ն. Բաղասեանցին։ Ո՞վ էր Ն. Բաղասեանցը, ոչ ոք չէր ճանաչում, ճանաչում էր միայն պ. Մ.։ Կօնսիստորիան յարգելով նրա խնդիրը՝ հաստատում է Ն. Բաղասեանցին կառավարչի օգնականի պաշտօնում։ Պարզվում է, որ անդրադէտ Ն. Բաղասեանցը ինչ-ինչ հանգամանքներով եղել է ոստիկան, վարել է շատ պաշտօններ զանազան գործերում, հասարակաց դատաստանով ենթարկվել է մահափորձի, բայց բաղդի բերմամբ ազատվել է։ Ճարպիկ ոստիկանական դերի մէջ վարժված պ. Ն. Բաղասեանցի տրամադրութեան տակ է տրվում ամբողջ Ղարաբաղի թեմի վանական կալուածները։

Բաղասեանցը վարպետ և մշակված եղանակով սկսում է շահագործել վանական կալուածները ոչ թէ հոգևոր իշխանութեան օգտին, այլ իր գրպանի։ Կուսական խիտ անտառները զոհվում են կացիններին շատ չնչին վաստակներով։ Գայլի ատամները սուր, ճանկերը պողպատեայ, իսկ միսն առատ—ինչու չուտեր։ Քարաւանն ուղղվում է դէպի Նոր-Բայազէտի կողմերը, Ղարաբաղից շատ և շատ հեռու, անտեսանելի հոգևոր իշխանաւորներից։

Սակն բանի ընդունակ պ. Ն. Բաղասեանցը քաջ իմանալով, որ երբևիցէ իր այդ կատարելիս հրաշագործութիւնների վարագոյրը պիտի բացվի, կատարում է հեռահեալ ճարպիկ խաղ։ Նա շարունակ կօնսիստորիա է լցնում զանազան գրութիւններ, որ այստեղ կամ այնտեղ «մեր պարտականութիւնները կատարելու ժամանակ քիւրդեր յարձակվել են մեզ կոտորելու, թոյլ չը տուին արձանագրութիւններ կազմել, անտառները անխնայ կոտորում են, խնդրում եմ յայտնել գաւառապետին մեզ օգնելու, աջակցութիւն ուղարկելու» և այլն և այլն։ Կօնսիստորիան իր կողմից շարունակ գրում է գաւառապետին՝ աջակցելու պ. Բաղասեանցին, կարծելով որ Բաղասեանցը մեծ գործ կատարելու վրա է, ջանք ու միջոց չէ խնայում կարգաւորելու կալուածները և որ այդ բանը հաճելի չէ քիւրդերին և ընդդիմութիւն են ցոյց տալիս։

Պ. Բաղասեանցը կատարում է և հեռահեալ ամենաճարպիկ խաղը։ Նա կազմում է բոլոր հայլաղների ցուցակը, գրում օգտվողների անունները, որոշում դեսեատինի չափերը և իւրաքանչիւր դեսեատինը բազմապատկում 25 կոպէկով, որոշում մէկին 25, 50, 100, 150, 300 և այն ռուբլիներ և գումարը հասցնում 13 հազարի, ուղարկում կօնսիստորիա, յայտնելով, որ քիւրդերը այդ հարկերը չեն տալիս և խնդրում է գրել գաւառապետին, ժողովելու կալուածների պարտքի դիմաց։

Կօնսիստորիան ուրախացած այդ նորութիւնից, գրում է գաւառապետին ժողովելու 13 հազարը, և պ. Մ.-ին արձակելով կառավարչի պաշտօնից, որպէս անգործի, թողնում է Բաղասեանցին որպէս լիակատար կառավարող։

Բայց հետզհետէ վարագոյրը բարձրանում է և պ. Բաղասեանցի պատկերը ցոյց է տալիս։ Կօնսիստորիա մտնում է շատ չնչին օգուտ, կալուածների վրա դրվում է արգելք պարքերը չը վճարելուն համար, գաւառապետից ստացվում է մի գրութիւն, որ այն 13 հազար ռուբլին վերացական բան է, սուտ է, և գանգատները ստուերանսում են, որ անտառները փչացվել են անխնայ կերպով։ Գաղտնիքը բացվում է։ Կօնսիստորիան այս անգամ աճապարում է նախկին ոստիկան և հասարակաց մահափորձից ազատված Ն. Բաղասեանցին վռնտել կալուածների սահմաններից, նշանակելով նոր մասնագէտ մարդ։ Այժմ այդ մասնագէտը յայտնում է կօնսիստորիային, որ Ն. Բաղասեանցի տուած ՇՀասները մի տարի քանի ամսվայ ընթացքում հասնում է 25—50 հազար ռուբլու։

25—50 հազարը մտել են մանաւանդ Բաղասեանցների գրպանները, իսկ կալուածները տնքում են 20 հազար պարտքի տակ։ «Աչքից հեռացած, մտքից մոռացված, իրանք անլեզու, աշխարհս անիրաւ»—ասում է բանաստեղծը։ Այդ դրութեան մէջ են մեր կալուածները։

Այստեղ, ի հարկէ, խօսքը Բաղասեանցի մասին չէ. մեր կալուածները Բաղասեանցների պէս այդպիսի արարածներ քիչ չէ տեսել, այլ խօսքս կալուածները կառավարելու եղանակի մասին է, որ օգուտները աւելի մասնաւոր մարդկանց գրպանն է մտնում, քան հոգևոր իշխանութեան, իսկ պարքը հետզհետէ կուտակվելով հասել է 20 հազարի։ Ասում են, որ մեր կալուածները Բաղասեանցի պէս չարագործ և վարժ ու ճարպիկ կառավարիչ չէ տեսած։

Այստեղ, ի դէպ, հրաւիրում ենք մեր հարուստների ուշադրութիւնը այդ կալուածների վրա, վերցնել և շահագործել։ Կայ հարուստ պղնձէ, երկանաքարի և երկաթի հանք, առատ փայտ, ջուր, ամեն տեսակ յարմարութիւն և ճանապարհ։

**

—

Ասխաբադ, 10 նոյեմբերի

Նոյեմբերի 2-ին, տեղական թերթում կանխօրէն յայտարարութեան համեմատ, տեղի ունեցաւ զրոյցում մի ժողով, որի զբաղմունքի առարկաներն էին՝ եկեղեցու հաշիւների քննութեան զեկուցումը և զրոյցի գոյութեան հարցը։

Զորրորդ տարին է, ինչ տեղիս զրոյցը կայ, տարէնը մի բաժանմունք աւելացնելով։ Մինչև այժմ լաւ թէ վատ կառավարվել է թոշակների, հասարակական տուրքի և ներկայացումների միջոցով. իսկ այժմ 3 տարով ընտրված հոգաբարձութիւնը մի տարվայ գործունէութիւնից յետոյ, ժողովրդի անտարբերութիւնից յուսահատված, ուզում է հրաժարվել։ Ներկայ հրաժարվող հոգաբարձուներից մէկ-երկուսը անցեալ տարի ընդհ. ժողովի մէջ պախարակում էին հին հոգաբ. կազմի անժամանակ հրաժարվելն ու փախուստ տալը, իսկ այսօր նոյն ընթացքի մէջ իրանք են գտնվում։ Հոգաբարձութիւնն իր հրաժարումը պատճառաբանում է նրանով, որ տեղիս հայ գաղութը խիստ անտարբեր է վերաբերվում դէպի ծխ. ուսումնարանը և յօգուտ դպրոցի վճռված ծխական տուրքը չէ վճարում, որով և շատ դժուարացնում է հոգաբարձութեան վիճակը։

Ասխաբադի նման 600 տնից բաղկացած մի գաղութի համար 5000—6000 ռ. բիւջէով մի երկդասեան դպրոց պահելը այնքան էլ դժուար գործ չէ, եթէ սակայն դրա համար բարի և անկեղծ ցանկութիւն լինի։

Տեղացի

—

Կազգուան, 20 նոյեմբերի

Ամսիս 16-ին կատարվեց տեղիս դպրոցի բացման հանդէսը սովորական ձևով։ Տ. Մարտիրոսեանի պատրաստած խումբը մի քանի ժողովրդական երգեր երգեց, ինչպէս նաև փոքրիկ աշակերտուհիների կողմից մի քանի ոտանաւորներ արտասանվեցին և արժանացան բուռն ծափահարութեան։ Բացի դրանից տեղիս «Կանանց մասնախումբը», որը ուսումնարանի նիւթականին մեծ աջակցութիւն է ցոյց տալիս, աշակերտուհիների ձեռագործներից վիճակախաղ էր պատրաստել, որը շատ աջող անցաւ։

Ուսուցիչներից մէկը բանախօսեց և այն միտքը յայտնեց, որ, շնորհիւ հասարակութեան անտարբերութեան, ուսումնարանը փակման վտանգի է ենթարկված։ Նրա ասելով՝ մեր ուսումնարանների վերաբացման օրից՝ տեղիս դպրոցի հոգաբարձութիւնն ամեն տարի, բացի մի տարուց, պարտք էր մնում ուսուցիչներին։ Ահա այդ իսկ պատճառով ներկայ ուսումնական տարվայ սկզբում ոչ ոք յանձն չէր առնում հոգաբարձուի պաշտօնը, մինչև որ՝ բաղմաթիւ միջոցներից վերջը՝ 20 հոգի երիտասարդներ երաշխաւորելով՝ եռանդուն կերպով սկսեցին կամաւոր նուէրներ հաւաքել, որը հասաւ 900 ռուբլի մի գումարի, որից 400 ռուբլին, սակայն, մնաց ապառիկ։ Այդպիսով միայն յանձն առան ընտրված հոգաբարձուները վարել իրենց պաշտօնը և բաց անել դպրոցը, սակայն շատ ուշ...

Մ. Ղազարեան

ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Սատանք Իվան Բողդանովիչ Կարգանովից յօգուտ Ղէյթունի սովեալների 200 ռուբլի։

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Վաղը, շաբաթ, Թիֆլիսի հայոց առաջնորդարանում, երեկոյեան ժամը 7-ին, նշանակված է Կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողովի նիստը։ Օրակարգն է՝ ընթերցումն արձանագրութիւնների, հաշուետուութիւն, որոշումն ապագայ գործունէութեան ծրագրի և զեկուցում Զանգեզուրի մասին։

✦ Երէկ, առաւօտեան ճիշտ ժամը 7 և 47 րոպէին, Թիֆլիսում զգացվեց ուժեղ երկրաշարժ, որ տեւեց մօտաւորապէս երեք վայրկեան։ Առաջին հարուածը շատ ուժեղ էր, իսկ մնացած երկու-երեքը համեմատաբար թոյլ։ Ուղղութիւնը արեւելից-արեւմուտք էր։

✦ Թիֆլիսի երեխաների խնամատար ընկերութեան գոյութիւնը ապահովելու համար կովկասեան բարձր իշխանութիւնը միջնորդութիւն է յարուցել, որ ամեն տարի հազարական ռուբլի նպաստ տրվի այդ ընկերութեան։

✦ Այժմ Բագուից ազատ կերպով, որովհետև այլևս խօլերա չը կայ, արտահանում են զանազան հին զգեստներ, բմբուլ, շորեր և այլն։

✦ Նոյեմբերի 25-ին, Արաքս կայարանից դուրս եկած ապրանքատար գնացքը Երևանի երկաթուղագծի 112-դ վերստի վրա խորտակվեց։ Զարդվեցին 18 վագոններ։ Դիծը փչացաւ 120 սաժէն տարածութեան վրա։ Սպանվեցին գլխաւոր կօնդուկտոր Մօրոզով, տորմոզի կօնդուկտոր Միրոշնիկով և մի անյայտ մարդ, որ գնում էր նոյն գնացքով։ Վիրաւորվեց մեքենավար Գալկին։ Ճանապարհորդական երթևեկութիւնը կատարվում է ընդմիջումով։ Խորտակման պատճառը դեռ չէ պարզված։

✦ Թիֆլիսի քաղաքային ոստիկանական վարչութեան կից խուզարկու բաժնի կառավարչի ժամ. կառավարիչ է նշանակվել Պօրֆիրիյ Բակօզոնը։

✦ Կլիմայակրթական կայսերական ռուսական ընկերութիւնը տեղեկացրեց կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան, որ վերջին ցուցահանդէսին լաւ մրգերի համար արծաթէ մեծ մեդալով պարգևատրված է Նուխու բնակիչ Սալամ Լաթիֆօղլին և փոքր մեդալով—շուշեցի Համբարձում Յարութիւնեանը։

✦ Նոյեմբերի 26-ին անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գ.-մ. Նէյգեբաուէրը դիտեց բոլոր գլխաւոր արհեստանոցները աշխատանքի ժամանակ։

✦ Լսում ենք, որ շուտով տեղի է ունենալու Հայոց Ազգագրական Ընկերութեան Կովկասագիտական-Մարդաբանական գրադարանի բացումը։

✦ Երէկ, նոյեմբերի 27-ին, Նաթլուղում իր տարեկան տօնը տօնեց 17-դ դրամական գունեան գունդը։ Ներկայ էին շատ բարձրատիճան զինուորականներ։

✦ Նոյեմբերի 25-ին Թիֆլիսի դուժայական ֆինանսական մասնաժողովը վերջացրեց 1909 թւի եռամսեայ նախահաշուի քննութիւնը։ Նախահաշիւը ֆինանսական մասնաժողովի եզրակացութեան հետ Թիֆլիսի նահանգապետը ներկայացնելու է նահանգական քաղաքացիական գործերի ատեանին։

✦ Թիֆլիսի նահանգապետը սրանից մօտ մի ամիս առաջ առաջարկութիւն էր արել քաղաքային վարչութեան, որ որոշ գումար յատկացվի քաղաքի միջոցներից Թիֆլիսի ոստիկանապետի վարչութեանը կից գտնվող խուզարկու բաժնի պահպանութեան համար։ Քաղաքային վարչութիւնը նոյեմբերի 25-ի իր նիստում քննելով պ. նահանգապետի առաջադրութիւնը՝ գտաւ, որ ներկայ դէպքում չը պէտք է բաւարարութիւն տալ այդ խնդիրքին։

✦ Քաղաքային տեխնիկները այս քանի օրս շրջելով առայժմ 3-դ 4-դ և 5-դ քաղաքամասերը կազմեցին ցուցակները այն տնատէրերի, որոնց տների ջրատար խողովակները մինչև գետին չեն իջեցված։ Այդպիսի տնատէրերի վերաբերութեամբ, ինչպէս յայտնի է, տուգանք է նշանակվելու։ Շուտով տեխնիկները շրջելու են և քաղաքի միւս մասերը։

✦ Թիֆլիսի նահանգական ատեանի կողմից օրինականացված է «Հրէական երաժշտասիրաց և գրականական ընկերութեան» կանոնագրութիւնը։

✦ Այս տարի հացի բերքը Սղնախի գաւառում եղել է հետևեալը. ցորեն 907,968 պուդ, գարի 118,870 պուդ վարսակ 16,665 պ., եգիպտացորեն 103,870 պ., հաճար 1800 պ. և գետնախնձոր 13,970 պ.։ Ազգաբնակութեանը մինչև նոր հունձը ուտելու համար անհրաժեշտ է ցորեն 998,968 պուդ, գարի 90,665 պ., վարսակ 25,770 պ., եգիպտացորեն 25,930 պ., հաճար 800 պ. և գետնախնձոր 7700 պուդ։ Սերմացու հարկաւոր է՝ ցորեն 252,635 պուդ, գարի 81,280 պուդ և այլն։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Նոյեմբերի 26-ին Թիֆլիսում ձերբակալվեց Կարապետ Ներսիսեանը, որ մեղադրվում է Սաբուրթալոյում Թիւրքահպատակ Նուբար Ներսիսեանին սպանելու մէջ։

✦ Նոյեմբերի 27-ին, երեկոյեան ժամը 8-ին, Միքայէլեան պրօսպեկտում, № 134 տանը, ինժենէր Սլուգօցկու տանը անյայտ պատճառից հրդեհ ծագեց, որ հանգցրին տնային միջոցներով։ Վնասները հասնում են 1000 ռուբլու։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

✦ Նոյեմբերի 23-ին Բագուի քաղաքացիների կողմից մի յատուկ պատգամաւորութիւն՝ քաղաքագլուխ Բայէվսկու առաջնորդութեամբ՝ ներկայացաւ քաղաքապետ գեն. Ֆօլբաումին՝ խնդրելու, որպէսզի նա չը թողնի իր ներկայ պաշտօնը, որի ժամանակ, պատգամաւորութեան ասելով, նա ընդհանուր յարգանք վաստակեց ազգաբնակութեան մէջ իր կօրեկտութեամբ, անաչառութեամբ և խիստ օրինական գործողութիւններով ու կարգադրութիւններով։ Այդօրինակ գործունէութեան շնորհիւ, ասել է պատգամաւորութիւնը, կեանքը իր սովորական ընթացքն է առել, ոստիկանութիւնը սկսել է աւելի լուրջ վերաբերվել իր պարտականութիւններին, և շատ այնպիսի երևոյթներ, որոնք դեռ ևս ոչ շատ ժամանակ առաջ սպառնում էին հասարակական հանգստութեանը, այժմ անկարելի են դարձել։ Քաղաքապետը պատասխանել է պատգամաւորութեանը, որ նրա խնդիրքը ուշացել է, որ թէև ինքը չէ էլ խնդրել բարձր պաշտօն տալ իրան, այնուամենայնիւ իրաւունք չի հատարի իրան հրաժարվել այդ նոր պաշտօնից, եթէ բարձրագոյն հրաման լինի։

քականութենէն անծանօթ։ Մինաս Չերազ բոլորովին բռնկած իր այդ պաշտօնին սուրբ կրակով՝ ալ դուռ չի մնար որ չը զարնէ։ Ամբողջ քաղաքական աշխարհը եւրոպական մամուլի ձեռքով կաշխատի սիրաշահիլ։ Եւ ունկնդրութիւնները ցոյց կուտան թէ ինչ շուտ հայուն ձայնը գթութեան կարժանանայ։ Անյաջողութիւնը ոչ աշխատողին, այլ դիւանագիտութեան շիլ, քար որտին վերագրելու է։

Մինաս Չերազի այս պատգամաւորութիւնը իրեն համար ժողովրդականութեան արձան մը կանգնեց։ Ու երբ Լահէի ժողովին կը մտածուէր հայկական հարցը ներկայացնել, հայ գաղթականութիւնը, երեսուն տեղերէ, զարձեալ զինքը պատգամաւոր որոշեց։ Եւ ինքը այդ պաշտօնը կատարեց։ Թէև խաղաղութեան վեհաժողովը՝ Հայաստանի խորովքի մէջ՝ կաթիլ մը կարեկցութիւն չուզեց թափել, սակայն Մինաս Չերազ նշանաւոր ակումբներու մէջ զարձեալ պերճախօս լեզուով արծարծեց հայկական դատը։ կարմիր փաստերը աւելի էին։ Չերազի ազգային ծառայութիւնը յարգած էր նոյն ինքն ազգը։ դեռ փոքր պատանի՝ իրեն կը յանձնուէր պատգամաւորի թարգմանի խիստ ծանր պաշտօնը։ ազգը գիտէր, որ Հայրիկ լեզու չունի, այլ բնական վեհափառ պատկառելիութիւն։ Դատին պաշտպանը Մինաս Չերազը պիտի ըլլար։ այդ համարմունքի հաւաստիք մը կը համարիմ պատրիարք Վարժապետեանի առ Մինաս Չերազ գրած սա նամակը.

«Սիրելիդ իմ Մինասիկ։ Ես քեզ կը ճանչեմ. դու բարի և ազգասէր ես. դու տեղ մը բռնած ես, որոյ տեղ մէկը չեմք դրած. դու միշտ ունեցած ես, ունիս և առաւելապէս պիտի ունենաս այն կարևորութիւնը, որ Չերազի յատուկ է. . Մեծ գործի վրայ անցնողը մեծ հոգի կրելու է, իբրև ժայռ արհամարհելով կոհակները, որչափ փրփրադէզ իսկ լինին... Քու ուղղութենէդ, աչալրջութենէդ, աշխատութիւններէդ շնորհակալ եմք ամենեքին»։

Մ. Չերազ ազգին օգտակար ըլլալու եռանդը միշտ վառ պահած է։ Իր հայրենիքի փրկութեան զինուորը և ամենէն հեղինակաւոր ասպետն է ճանչցուած։ Ամեն պարագային, երբ հայուն աղերսու կամ բողոքող ձայնը ուզեր ենք հասցնել Եւրոպա, Մ. Չերազը անտեսուած չէ, մանաւանդ թէ փնտռուած։ Իրեն դիւանագիտական յատկութիւնը գնահատուած է. և արժանի էր յարգանքի իր գործունէութեամբը։

Քառասուն տարի հայկական դատին համար աշխատիլ, հեռանալ հայրենիքէն, ծընողքէն, սիրելիներէն՝ այս նուիրագործում է։

1865-էն սկսեալ՝ ինքը ազգին ծառան է, դասախօս, դատիարակ, հրապարակագիր, խմբագրապետ, գրագէտ, մատենագիր, ատենապետ, քարտուղար, պատգամաւոր և հայ դատին դատաւոր անգլիֆրանսական թերթով։

Քառասուն տարի անընդհատ ազգին համար աշխատած։

Կը յարգեմ իր քառասնամեայ գործունէութիւնը։ Սովորական գործիչներէն չէ, ու մենք չկրցանք յարգը գնահատել այն ամեն միջոցներով, ինչ որ պարտականութիւնը կը ստիպէ։ Եւ թողուցինք, որ ինքը վշտահար հայ կեանքէն հեռանայ։ Ու ես, չը լլալով ոևէ կուսակցութեան մը գերին, ազատ եմ ըսելու, որ մեր զինուորական երկու անձատ հին կուսակցութիւնները՝ պէտք էին վարձատրել յեղափոխական մեծ ոսկիվիրան։ Իրենց կիսնար սարքել հանդէս մը անոր քառասնամեայ գործունէութեան յոբելեանին։ Թողնելով իր շարք մը գրական հատորները, միմիայն իր «L'Arménie»-ն թղթատելով՝ կարող կըլլանք իսկոյն կշռել անոր թանկագին արժէքը։ Անգլիերէն և ֆրանսերէն լեզուներով Մ. Չերազ հայը Եւրոպայի կամերաներու և ճեմարաններու առջև պանծացուցեր է։ Մեր քաղաքական պատմութիւնը, մեր ռազմական անցեալը ու ներկան և ջարդերու պատմութիւնը դիւանագէտ մտքերու առջև դրեր է «L'Arménie»-ով և արծարծուն պահեր է հայկական հարցը։ Եւրոպայի ճեմարանները «L'Arménie»-ով շարունակաբար կիմանային, թէ Ասիոյ մէջ միակ ժողովուրդ մտաւորական ցեղ՝ հայն է, որ կը լակի խայտառակ վարչութեան լուծին տակ. Մ. Չերազ կը թարգմանէր մեր կրակոտ և շնորհալի բանաստեղծներու ընտիր կտորները։ Ընդարձակ էջեր կը նուիրէր Դամառ-Քաթիպայի, Պետրոս Դուրեանի, անգիր դպրութեան, և հայագէտ եւրոպացիներուն։

*

Տազանդներ, աչքի զարնող մեծ հանճարներ՝ դարերու երկունքով կը ծնին. այդ կարգէն են անոնք, որ անկեղծօրէն բոլորանուէր կը զրկեն ազգային փրկութեան խաչը։ Անտարբեր մնալ եռանդուն, գործօն հեղինակաւոր գործիչներու մասին՝ ազգային արատ մը կը համարիմ։ Դամառ-Քաթիպա կը գրէ Մինաս Չերազին. «Թերթիդ ազդեցութիւնը շատ մեծ է. սոյն տեսակ ձեռնարկութիւններէն միայն քու զըրչիդ կուտան ամենամեծ կարևորութիւն և հաւատ կընծայեն, ուրեմն քեզ բնաւ լքանել պէտք չէ. վստահ եղիր, քեզ բամբասողներին ոչ ոք հաւատ չի ընծայիլ, թէ հայ լինի նա և թէ օտարազգի. եթէ գործը կանոնաւոր կերպարանք ստանայ, անշուշտ զարձեալ դու կը լինիս ազգիս ներկայացուցիչներէն մին, եթէ չասեմ գլխաւորը»։ Ժամանակն է կարծեմ որ միամիտ ուսխալ ըմբռնումով ծագած դժտութիւնը սրբագրուի։ Վերադարձնել հին գործիչը Ցեղափոխութեան Աշտիշատը՝ ուր դեռ կրնայ ապրիլ իբր աւագ քրմապետը հայ ազգին։

Ե.

✦ Նոյեմբերի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին, Վ.-Նաւգորնայա փողոցի վրա № 6-րդ տան մէջ, Վլադիմիրի նահանգի գիւղացի Ստեպան Զախարովիչ Պլատօնովի ընակարանում, վերջինիս որդին, տեղական տեխնիքական դպրոցի աշակերտ՝ 24 տարեկան Միխայիլը, իր խորթ մօր հետ կռուելով, ֆիննական դանակի երկու հարուածով սպանել է նրան։ Սպանված մայրը 26 տարեկան է։ Կռուելու շարժառիթը ընտանեկան տարաձայնութիւններն են եղել։ Միխայիլը կալանաւորված է։

✦ Անցեալ կիրակի, նոյեմբերի 23-ին, կայացել է տեղական հայոց եկեղեցական-ծխական դպրոցների հոգաբարձուների ընդհանուր նիստը հրաւիրված անձանց մասնակցութեամբ։ Հոգաբարձութիւնը զեկուցել է ժողովին դպրոցների ցաւալի դրութեան մասին, որի մէջ դրված է դրական միջոցներ չունենալու շնորհիւ։ «Բ. Է.» լրագրի ասելով, հոգաբարձութիւնը ի նկատի ունի հասարակութեանը դիմել և աջակցութիւն խնդրել։ Չէ կարելի չը ցաւել, տեսնելով այդչափ անպատաւաբեր անտարբերութիւն տեղական հայ հասարակութեան կողմից դէպի մի այնպիսի սուրբ գործ, ինչպիսին է մատաղ սերնդի կրթութիւնը։ Չը գիտենք, էլ ինչ գործում պէտք է այդ հասարակութիւնը ցոյց տար իր կենսունակութիւնը, իր գիտակցութիւնն ու պատուաճանաչութիւնը։

✦ Բալախանիում ներկայումս կազմակերպվում է մի ընկերութիւն, որի նպատակն է զուարճութիւններ կազմակերպել մանուկների համար։ Հիմնադիրները այդ նպատակով արդէն ունեցել են երկու ժողով։ Վերջին ժողովում, նոյեմբերի 23-ին, ներկայ են եղել բաւականաչափ ծնողներ ևս։ Երկար վիճաբանութիւններից յետոյ որոշել են ընտրել մի մասնաժողով և յանձնարարել նրան մշակելու կանոնադրութիւնը և ներկայացնելու քաղաքապետին ի հաստատութիւն, իսկ ժամանակաւորապէս մանկական զուարճութիւնները կազմակերպել բալախանեան կրուժօկի թատրոնի շէնքում։ («Բ. Է.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

✦ Օդեսայում սպանված երկու օֆիցէրների գործի մասին կատարված քննութեան ժամանակ հարցաքննութեան են ենթարկվել 150-ից աւելի վկաներ։ Պարզվում է, որ ոչ մի հիմք չը կայ քաղաքապահներին զինուորական դատարանի յանձնելու։ («Բ. Վ.»)

✦ «Слово» լրագիրը հաղորդում է, որ Մոսկվայի մի քանի խոշոր առևտրական տներ արդէն վճռական քայլեր են արել մոտիկից ծանօթանալու բալքանեան շուկաների արդի դրութեան հետ և կարելւոյն չափ օգուտ քաղել ստեղծված նոր հանգամանքներից, որ արդիւնք են ասարիական ու մասամբ էլ գերմանական ապրանքների դէմ սկսված բոյկոտի։

✦ Լեհական թագաւորութեան մէջ տեղական ինքնավարութիւն ժողնելու օրինագիծը, ինչպէս հաղորդում են, արդէն ընդհանուր գծերով պատրաստել է ներքին գործերի վիճիստրի օգնական Կրիժանովսկին։ Այդ օրինագծի համաձայն, ընտրողական իրաւունքից օգուտ պիտի քաղեն ընտրողների աւելի լայն խաւեր, քան ներկայ զեմստվային կանոնադրութեամբ, որը տարածված է Եւրօպական Ռուսաստանի 34 նահանգների վրա։ Հրէաների մուտքը բաւականաչափ կրճատված է սակայն։ («Сл.»)

✦ Նոյեմբերի 19-ին հեռագրով Պետերբուրգ է կանչված բարօն Նօլկեն։ «Нов. Вр.»-ի ասելով, գէներալ Իվանովի հետ միասին, նա ևս համարվում է թեկնածու Օդեսայի քաղաքապետի պաշտօնի համար։

✦ Ի նկատի առնելով այն, որ վերջին ժամանակներս Պետերբուրգում խոլերայով հիւանդացողների թիւը սկսում է աւելանալ, Պետերբուրգի քաղաքապետը յիշեցրում է մայրաքաղաքի բնակիչներին, որ անհրաժեշտ է խոլերայից պաշտպանվելու համար նախազգուշութեան կանոնները ճշտութեամբ պահպանել։ («Рѣчь»)

✦ Պետերբուրգում կազմակերվում է ուշագրաւ պատմել, այն է՝ օպերային ընկերութիւն բացառապէս կազմված կոնսերվատորիայի սաներից, ուսանողներից, կուրսիստներից և այլն։ Արտելի անդամների թիւը 100-ից անցնում է արդէն։

✦ Բլագովէշչենսկի քաղաքային դուման միջնորդութիւն է յարուցել պատերազմական դրութիւնը վերացնելու մասին, որը մտցված է եապօնական պատերազմի ժամանակվանից։

✦ Մինսկի քաղաքային դումայի գանձարանի համաձայն, սենատը բացատրել է, որ քաղաքները պարտաւոր չեն վճարել ոստիկանամասերում դրված տելէֆոնների համար, ինչպէս և գումարներ յատկացնել եկեղեցական ծխական դպրոցներին։

✦ Գերմանական դատախազութեան պահանջի համաձայն, Աբցիբաշեվի «Սանինի» գերմաներէն թարգմանութիւնը, որ լոյս է տեսել Միւնխենում և Լէյպցիգում, գրաւված է «իր անվայել բովանդակութեան համար»։ («Бирж. В.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Լագօդաղ, 25 նոյեմբերի

Նոյեմբերի 23-ին հայ թատերասէրները տուեցին հինգերորդ ներկայացումը. խաղացին «Մախմուր սալոփս մեաց» և «Երկու քաղցածներ» վոդեվիլները և վրացերէն լեզուով «Ադվակատ Մելամէ» կոմէդիան։ Խաղը շատ աջող անցաւ։ Հանդիսականները բուռն ծափահարութիւններով ողջունում էին սիրողներին։ Հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ հայոց դպրոցի թատերասրահից։

Զուտ արդիւնք մնաց յօգուտ դպրոցի մօտ 35 ռուբլի։

Հետևեալ ներկայացումը լինելու է Ծնունդեան տօներին։ Կը խաղան «Խաթարալա» Սունդուկեանցի։ Արդիւնքը յատկացվելու է կ. Հ. Բ. Ընկ. Լագօդաղի ճիւղի վարչութեան գրադարանին։

N. N.

—

Ղշլաղ, 24 նոյեմբերի

Շաբաթ, ամսիս 22-ին մեր գիւղական սիրողների խումբը, մասնակցութեամբ ծխական դպրոցի ուսուցչի և վարժուհու, ջուլհականոցի վարպետուհու, խաղաց առաջին անգամ «Մարվող ճրագներ» դրաման և «Երկու քաղցածներ» վոդեվիլը։

Որովհետև մեր հասարակութեան մեծամասնութիւնը դեռ ևս թատրոնի մասին գաղափար չունէր, ուստի ներկայացմանը տուել էին տօնական բնաւորութիւն։ Շինված էր բեմը, որքան պայմանները թոյլ էին տուել, գեղեցիկ և յարմար։ Ներկայացմանը շապել էր ներկայ լինելու Մեծ-Ղարաքիլիսայի ինտելիգենցիան։ Ներկայացումը սպասածից չափազանց աջող անցաւ։ Թափառաշրջիկ սիրողի դերը շատ լաւ պատկերացրեց մի գիւղական կրիտասարդ։ Ժողովուրդը իսկապէս շատ ուրախ սրտով հեռացաւ։ Պէտք է ասել, որ ներկայացման աջողութեանը առանձնապէս նպաստեց տանուտէրի օգնական Յովհաննէս Ալլահվերդեանցը, որը իսկապէս արժանի է խորին շնորհակալութեան։

Գիւղական սիրողների խումբը մտադիր է խաղալ Վ. Փափազեանի «Ժայռ» դրաման։

Ներկայացման արդիւնքը յատկացրին նոբարաց ջուլհականոցին։

Մ. Ղազարեանց

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս երևում է, թիւրքաց ազատական մամուլն ևս փափագ է յայտնում, որ Իզմիրլեան սրբազան Հայ պատրիարք Կ. Պոլսում և չը լինի կաթողիկոս ամենայն հայոց Էջմիածնում։ Առաջ ենք բերում Կ. Պոլսի «Հուրրիկը Ումումիէ» թերթի կարծիքը.

Գալով մեզի, մենք սրտանց շնորհաւորելով հանդերձ մեր հայ հայրենակիցները կաթողիկոսական ընտրութեան այս արդիւնքին համար՝ կը փափաքինք որ Իզմիրլեան սրբազան Հայ պատրիարքական աթոռին վրայ, որովհետև Իզմիրլեան սրբազան էր որ բռնապետութեան շրջանին հաղիւ մէկ տարի տեսած իր պատրիարքական պաշտօնավարութեան միջոցին զրուատելի քաջասրտութեամբ և սիրով կուրծք տուաւ բռնապետութեան, ազգու կերպով, չբաժնուեցաւ ճշմարտութենէ և հաւատարմութենէ, մարմնացեալ բողոք մը հանդիսացաւ օսմանեան ազնիւ ազգին մէկ կարևոր ցեղին՝ հայերուն դէմ ի գործ դրուած հալրստահարութեանց և անիրաւութեանց պատճառաւ, և ի վերջոյ, բռնապետութեան ձեռքն իր վրայ ևս ծանրանալով, աքսորուեցաւ Երուսաղէմի վանքը, ուր մնաց տասներկու երկար տարիներ։ Հայրենասիրութեան մարմնացում այսպիսի սիրելի ազատական մը մեծապէս օգտակար պիտի հանդիսանայ այժմ, ուր ազատութեան կենսանորոգ արևը լուսապայծառ կը շողշողայ, ալ աւելի ամրապնդելու ծառայելով թիւրք և հայ ցեղերուն միջև արդէն զարերէ ի վեր գոյութիւն ունեցող եղբայրական յարաբերութիւնները։ Չենք կրնար ուրանալ, որ հայ եպիսկոպոսներուն մէջ կան պատրիարքութեան պաշտօնին արժանաւոր անձնաւորութիւններ, բայց Իզմիրլեան սրբազան ոչ միայն մեր հայ հայրենակիցներուն, այլ և թիւրքերուն և այլ օսմ. ցեղերուն սէրն ու վստահութիւնն արժանապէս շահած կարող անձնաւորութիւն մըն է, որուն՝ մեր սիրելի հայրենիքէն բաժանման հեռանկարը մեզի խորին վիշտ կը պատճառէ, և գրեթէ փափաք կը զգանք, որ Ցարը չվաւերացնէ իր կաթողիկոսական ընտրութիւնը։ Մեր հայ հայրենակիցներուն ներողութիւնը կը հայցենք մեր զգացումներն այսպէս անվերապահօրէն արտայայտելուս համար։

*

Բագուում այս նոյեմբերի 23-ից սկսել է հրատարակվել ռուսերէն մի նոր ամենօրեայ թերթ «Вѣстникъ Баку» վերնագրով, որի խմբագիր-հրատարակիչն է Գ. Սարգսեանը։ Ինչպէս յայտնի է, վերջերս մեծ պառակտումն առաջ եկաւ այն խմբի մէջ, որ հրատարակում էր «Баку» թերթը. սրա խմբագրական կազմը, Պոնոմարեվ ռուս գրողի առաջնորդութեամբ, տպագրեց «Каспій» թերթի մէջ մի մանրամասն բացատրութիւն, ուղղված «Баку» լրագրի հրատարակիչ-խմբագիր Կ. Խատիսեանի գործունէութեան և վարմունքի դէմ, որի մէջ յայտնում էր իր և ընկերների խմբագրական կազմից հեռանալու պատճառները։ «Баку» թերթը դադարեցրեց իր հրատարակութիւնը և նրա տեղ սկսեց հրատարակվել «Бакинское Эхо» թերթը։ Այժմ էլ տեղեկացնում են մեզ, որ Բագուում մի խումբ անձինք, Բ. Դօլուխանովի ղեկավարութեամբ, մտադիր են հեռացնել «Бакинское Эхо» և «Баку» թերթերի խմբագրութիւնից պ. Կ. Խատիսեանին և յանձնել այդ թերթերի հրատարակութիւնը ու խմբագրութիւնը պ. Գ. Վէրմիշեանին։ Ինչպէս երևում է, մի ուրիշ խումբ անձանց ևս, բաժանվելով, հիմնել է «Вѣстникъ Баку» թերթը պ. Գ. Սարգսեանի ղեկավարութեամբ։

Մենք ստացանք այդ նոր թերթի առաջին երկու համարները, որոնք հաճելի տպաւորութիւն են թողնում իրանց ճոխ բովանդակութեամբ։ Խմբագրական Pro dome sua յօդուածի մէջ նոր թերթը յայտնում է, որ նա ուղղակի շարունակութիւն է այն խմբագրութիւնների, որոնք վարում էին «Баку» և «Бак. Извѣстія» թերթերը, ուստի և նրա գլխաւոր նպատակը պէտք է լինի տեղական և կովկասեան հարցերի լուսաբանութիւնը։

Աջողութիւն ենք ցանկանում մեր նոր ընկերակցին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիներին

Թիֆլիս, 17 նոյեմբերի

Ահա երկրորդ տարին է, որ գոյութիւն ունի Կովկասի Հայ. Դպրոցների Ուսուցիչ-Ուսուցչուհիների Միութիւնը, որ նպատակ է դրել կազմակերպել հայ ուսուցիչ-ուսուցչուհիներին, բարեւաւելու համար նրանց անտեսական, մտաւոր և առողջապահիկ դրութիւնը։

Ինչպէս յայտնի է, մինչև այժմ հայ ուսուցչութիւնը կրել է ամեն տեսակ զրկանքներ, բայց նա տարել է այդ բոլորը յանուն հայ հասարակութեան մատաղ սերնդի զարգացման և դաստիարակութեան։

Այժմ հասել է ժամանակը, որ ուսուցչութիւնը մտածէ նաև իր բարեկեցութեան մասին, մի բան, որ նշանակում է նոյնպէս նպաստել դպրոցական գործի բարգաւաճման։

Ունենալ անտեսապէս ապահով, առողջ և բանիբուն ուսուցիչներ, նշանակում է ունենալ ժամանակի պահանջներին բաւարարող մի հասարակական գործօն, առանց որի, թւում է մեզ, ոչ մի հասարակութեան առաջադիմութիւն երաշխաւորված չէ ապագայի նկատմամբ։

Արդ, նկատի ունենալով այս բոլորը, մենք հրաւիրում ենք մեր ընկեր ուսուցիչ-ուսուցչուհիներին՝ շապել անդամագրվել Ուսուցչական Միութեանը և, ստուգելով նրա շարքերը, աշխատել միահամուռ ջանքերով իրագործել այն նպատակը, ինչ առաջադրել է Ուս. Միութիւնը։

Նախագահ՝ Գ. Վարդանեան

Քարտուղար՝ Ա. Դիլանեան

Հասցէ՝ Могнинская ул., домъ Армянскаго Благотворительнаго Общества, № 2. Центральному Правленію Общества учителей и учительницъ армянскихъ школъ на Кавказѣ.

—

Բագու, 18 նոյեմբերի

Հայ հասարակութեան կամ, աւելի ճիշտը, հայ հասարակութեան առաջաւոր մասի ուշադրութիւնն է հրաւիրվում հետևեալի վրա։

Վերջին ժամանակներս մեր բարեգործական-կուլտուրական ընկերութիւնները մէկ կողմից, իսկ եկ.-ծխ. դպրոցների հոգաբարձութիւնները միւս կողմից մի առանձին եռանդ են ցոյց տալիս տարբերական դպրոցներ բանալու։ Ըստ երևոյթին անուշադիր է թողնված գլխաւոր պայմաններից մէկը, առանց որի տարբերան կրթութեան գործը դրական հետևանքներ չէ կարող ունենալ։ Դա հմուտ և պատրաստված ուսուցիչների պահանջն է, որի կարիքը հետզհետէ զգալի է դառնում։ Ուսուցիչներ մեզ տալիս են մեր թեմ. դպրոցները, իսկ գոյութիւն ունեցող թեմ. դպրոցները բաւականութիւն չեն կարող տալ, որովհետև ուսուցիչների պահանջը գնալով մեծանում է, այն ինչ թեմականների տուածը մնում է միևնոյնը։ Որպէսզի դպրոցական գործը ժամանակին չը տուժէ, հարկաւոր է այժմեանից մտածել այդ պակասը լրացնելու։

Ինչպէս յայտնի է, մեր թեմերից միայն Շամախու թեմը թեմ. դպրոց չունի. այս երևոյթը ինձ համար շատ անհասկանալի է թւում, որովհետև թեմ. դպրոց ունենալու համար բոլոր պայմանները կան։ Շամախու թեմը իր հարուստ Բագուով նիւթականի կողմից դժուարութիւնների չը պէտք է հանդիպէ. իսկ թեմ. դպրոցի կարևորութիւնը ահագին է. թեմի համար հարկաւոր են կրթված քահանաներ և ուսուցիչներ, ապա ուրեմն թեմ. դպրոց չունենալու պատճառը պէտք է փնտռել մեր հոգ. իշխանաւորների և տեղական գործիչների դատապարտելի անտարբերութեան մէջ։ Սրանից 10—11 տարի առաջ, եթէ յիշողութիւնս ինձ չէ խաբում, Խորէն Ստեփանէի մի քանի քարոզների շնորհիւ, այստեղ Բագուում թեմ. դպրոցի օգտին 200—300,000 ռուբլու ստորագրութիւն հաւաքվեց և այս ստորագրված գումարը պատրաստվում էին հաւաքել, բայց շնորհիւ քաղաքական անհաստատ պայմանների Խորէն Ստեփանէ ստիպված եղաւ հեռանալ, որով խափանվեց հանգանակութեան գործը ու մոռացութեան տրվեց թեմ. դպրոցի հարցը. և այդ օրվանից մինչև հիմա չեղաւ մէկը, որ մոռացութիւնից հանէր այդ հարցը և եռանդով կպչէր գործին։ Տասը տարվայ ընթացքում Բագուն անտեսապէս ահագին առաջադիմութիւն է արել, այնպէս որ նիւթականի կողմից անաջողութեան մասին, իմ կարծիքով, աւելորդ է մտածել։

Թեմ. դպրոցը հարկաւոր է բանալ թեմի կենտրոնում՝ Շամախի քաղաքում, որպէսզի կարողանայ իր նպատակին ծառայել և կապված լինի ամբողջ թեմի հետ. թէև կան Բագուում բանալու կողմնակիցներ, բայց նրանք սխալվում են, որովհետև թեմ. դպրոցը Բագուում լինելու դէպքում կը ծառայի միայն Բագուին և ոչ թէ ամբողջ թեմին, այսինքն կը դադարէ թեմական լինելուց։ Բագուն, ընկած լինելով թեմի մի ծայրում, հեռու է հայ ազգաբնակութիւնից (գիւղացիներից), և կեանքը չափազանց թանդ լինելով՝ գիւղացիների այժից վեր կը լինի իրանց երեխաներին ուղարկել դպրոց, իսկ միջոց ունեցողը իր երեխային կը տայ պիտական դպրոցը, այնպէս որ դպրոցից կօգտվեն միայն նրանք, որոնք արդէն ապրում են Բագուում, իսկ այդպիսիները դպրոցը աւարտելուց յետոյ մնալու են Բագուում, այդպիսով թեմը մնալու է էլի առանց թեմ. դպրոցի։

Ն. Սերբերեակեան

—

Խոնաշինակ գիւղ, 10 նոյեմբերի

Վարանդայի Խոնաշինակ գիւղի երկաբնակ դպրոցի հոգաբարձութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում նոյն գիւղի բնակիչ Աշտարուր Տէր-Գրիգորեանցին, որն իր կնոջ՝ Մանուշակ Տէր-Գրիգորեանցի մահվան առիթով նուիրեց տասն և հինգ ռուբլի (15 ռուբլի)։ Նուիրված գումարը պիտի գործադրվի մի չքաւոր աշակերտի համար, որը պիտի սովորի գիւղի ծխական դպրոցում ձրիաւորժ, երեք տարի ժամանակով։

Այս առաջին բարեգործութիւնն է, որ կատարվում է մեր գիւղում, և դա թող օրինակ դառնայ Խոնաշինակի հասարակութեան, որի մեծագոյն մասը ապրում է քաղաքներում, գլխաւորապէս Բագուում։

Նախագահ հոգաբարձութեան՝

Մաղաքիա Ք. Տէր-Գրիգորեանց

—

Բաց նամակ Աշտարակի բնակիչ Սարիբէկ Շահազիզեանին

Մոսկվա, 20 նոյեմբերի

Մեր անմոռանալի բարեկամ և պաշտօնակից, ըստ Լազարեան ճեմարանի, հանգ. Սմբատ Շահազիզեանը, որ ձեր կրտսեր եղբայրն էր, իր կենդանութեան օրերում ձեզ տարեկան նպաստ էր նշանակել 200 ռուբլի, որ դուք ամենայն ճշտութեամբ ստանում էիք իր ժամանակին։ Սակայն չը բաւականանալով դրանով, առաջին յարմար առիթում, տեղի թէ անտեղի, դուք, պատճառ բերելով ձեր չքաւորութիւնը, դարձեալ դիմում էիք Սմբատին անվերջ խնդիրքներով և պահանջում էիք նրանից նոր-նոր գումարներ։ Մի օր գրում էիք, թէ ձեր այգին Աշտարակում փչացել է. մի ուրիշ անգամ յայտնում էիք, թէ ձեր դուռտրը մարդու էք տալու. ապա՝ հաղորդում էիք, թէ որդուն էք պսակում. և այսպէս անդադար կլորիկ գումարներ էիք կորզում նրանից, որով շատ վշտացնում էիք Սմբատին։ Այժմ Սմբատը այլևս չը կայ. և նրա մահից յետոյ մնաց 160,000 ր. մի պատկառելի գումար, որից տաս հազար ռուբլին, ինչպէս ձեզ յայտնի է ձեր եղբորորդոց վկայութիւնից, Մոսկվայի հայ հասարակութեան սեփականութիւնն է, հանգանակված 1892 թ. Մ. Շահազիզեանի 30-ամեայ գրականական և մանկավարժական գործունէութեան առիթով, և կոչվում է Նազարեան-Նալբանդեան ֆոնդ։ Այդ ֆոնդի տնօրէնութիւնը հասարակութիւնը յանձնել էր իրան յօթելիարին և դրանից ստանալիք տոկոսները Սմբատը բաժանում էր մեր չքաւոր հեղինակներին։ Ձեր հանգ. եղբայրը կտակ չը թողեց, ուստի նրա բոլոր կարողութիւնը ժառանգութիւն հասաւ, ըստ օրինի, ձեզ, ձեր քրոջ և երեք եղբորորդոց, այն է՝ Արմենակ, Սիմոն և Երուանդ Շահազիզեաններին։ Ձեր քոյրը և երեք եղբորորդիք, որ, իրանց ուսումը աւարտելով Լազարեան ճեմարանում, լաւ դիրք ունեն հասարակութեան մէջ, պատրաստ են իրանց ընկած տաս հազարից բաժինը յետ դարձնել ըստ պատկանելոյն. միակ խոչընդոտը ձեր կողմից է։ Ականջ դրէք ձեր եղբորորդոց յորդորանքներին և շտապեցէք ձեր բաժինն էլ յանձնել նրանց, որ նրանք էլ հասցնեն մեզ, Մոսկվայի հայ հասարակութեանը։ Ցիշեցէք, որ մի անգամ արդէն մեծ վտանգ էր սպառնում այս ֆոնդին Գօլիցին իշխանի օրերում, երբ ֆոնդը փոխադրված էր կովկասեան բարեգործական ընկերութեանը. մինչև այժմ նոյն վտանգն է սպառնում յիշեալ ֆոնդին ձեր կողմից, որ ամենից շատ էք բարեբարված Սմբատից։ Պ. Սարիբէկ, մի արատաւորէք մեր բանաստեղծի բարի անունը, գիտցէք, որ հասարակաց դատաստան կայ։

Յանձնաժողովի անդամ՝

Աշտարուր Յովհաննիսեան

Յ. Գ.- Խոնարհաբար կը խնդրեմ մեր հայ թերթերի խմբագիրներին տրատապել այս նամակ։ Ա. Յ.

—

Ղշլաղ, 25 նոյեմբերի

Ղշլաղի ծխական դպրոցի հոգաբարձութիւնը իր բարոյական պարտականութիւնը համարեց մամուլի միջոցով իր խորին շնորհակալութիւնը յայտնել Բագուի Գուլտուրական Միութեան կրթական յարգելի սեկցիային այն երկու հարիւր ռուբլի նպաստի համար, որը անցեալ տարվանից յատկացրել է մեր աղքատ դպրոցին։

Ի դիմաց ծխ. դպ. հոգաբարձութեան՝

Արգար Տէր-Մկրտչեան

—

Ախալքալաք, 8 նոյեմբերի

Կ. Հ. Բ. Ը. Ախալքալաքի ճիւղի վարչութիւնը խորին շնորհակալութիւն է յայտնում իր քաղաքացի Գէորգ Դարբինեանցին, որ խոստացել է, քանի գոյութիւն կունենայ Բ. Ընկերութեան Ախալքալաքի ճիւղը, իւրաքանչիւր տարի կրթական նպատակով նպաստ տալ նրան 15 ռ., որպէսզի այդ գումարով երեք թոշակաւոր սան պահվի—երկու տղայ, մէկ աղջիկ—տեղական հայոց ծխ. դպրոցում, իր հանգուցեալ հօր՝ Կարապետի, մօր՝ Եւայի և հօրեղբօր՝ Մեսրոպի յիշատակին։

Կ. Հ. Բ. Ը. Ախալք. ճիւղի Վարչութիւն

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԻԹՈՎ

(Նամակ խմբագրութեան)

—

Լրագիրները հաղորդեցին, որ Բագուի Հ. Կուլտ. Միութիւնը մտադրվել է Խ. Աբովեանի մահվան 60-ամեակը ու «Վէրք Հայաստանի» տպագրութեան 50-ամեակը յաւերժացնելու նպատակով կանգնեցնել Երևանում նրա արձանը, որի համար հանգանակվելու է մօտ 15,000 ր.։ Իսկ Միութեան օրգան «Զանգը» (№ 1—2) յայտնում է, որ Միութեան գեղարուեստական սեկցիան արդէն նշանակել է մրցանակներ արձանի ամենաաջող ուրուագիծը ներկայացնողների համար։ Այս խնդրի առիթով կարևոր ենք համարում մի քանի խօսք ասել։

Ցայտնի է, որ եւրօպական ազգերը իրանց մեծագործ զաւակների յիշատակը յարգելու համար պարտական են համարում միջոցներ ստեղծելու նոյն այդ անձնաւորութեան գործերն ու գործունէութիւնը պարզաբանելու ու գնահատելու համար։ Երկրորդ, նրա անունով հիմնում են այնպիսի միութիւններ, որոնք զարկ տային գիտութեան կամ գեղարուեստի այն ճիւղին, որին նըւիրվել էր մեծարելի անձը։ Այնուհետև օգտվելով այդ անձնաւորութեան անուան հըմայքից միջոցներ են հայթայթում այնպիսի ձեռնարկութիւնների համար, որոնք իրանց չափով նպաստէին հասարակութեան բարօրութեանը ընդհանրապէս և լուսաւորութեանը մասնաւորապէս։

Մեծ ժողովուրդների համար մեծածախս արձաններ կանգնեցնելը մի շռայլութիւն է, որ թոյլատրում է նրանց ազգային ահագին հարստութիւնը։ Վիկտոր Հիւգոյին արձան կանգնեցնելու համար հարիւր հազարաւոր ֆրանկները մի ձոյլ մետաղի վերածելը ու Պարիզի մի անկիւնը նրանով զարդարելը ֆրանսիական մեծ ժողովրդի համար այնքան էլ մեծ զոհողութիւն չէ։ Բայց միթէ նոյնը կարող են և իրաւունք պիտի համարեն անելու մի փոքրիկ ժողովրդի որդիներ, մի ժողովրդի, որ արձանների կարիքից առաջ բազմաթիւ անյետաձգելի կարիքներ ունի։

«Ինչ վայել է Արամազդին, վայել չէ եղին»։

Կուլտուրական Միութիւնը իր պարքը կատարած է համարել համեմատաբար մի չնչին գումար գործադրելով ու Աբովեանի «Վէրքը» հրատարակելով, իսկ շատ աւելի մեծ գումար (մօտ 15,000 ր.) նա գործադրում է արձանի պէս ապրանքի համար։ Թող մի բօպէ մտածէ Միութիւնը, թէ արդեօք շատ ուսումնասիրութիւններ ունենք Աբովեանի կեանքին ու երկերի լուսաբանութեանը նուիրված. արդեօք արդէն այնքան բազմաթիւ են հայ գրականութիւնը ուսումնասիրողները, արդեօք արդէն այնքան հարուստ է գրական հրապարակը այդ ճիւղին նուիրված լուրջ աշխատութիւններով, որ Միութիւնը աւելորդ է համարել նախ ուշ դարձնել այդ կարիքի վրա և Աբովեանի անունը կապել այս կարգի ձեռնարկութիւնների հետ։ Մթթէ չէր կարելի այն գումարի տոկոսով, որ գործադրվելու է արձանի համար, ընդմիշտ պարբերաբար հրատարակել «Աբովեան ժողովածուներ», որոնք նուիրված լինէին հայ կեանքի, գրականութեան պատմութեան և այլոց ուսումնասիրութեանը։ Մթթէ չէր կարելի այդ գումարով շարունակաբար Աբովեանի անունով մի ուսանող ուղարկել արտասահման նրա հայրենիքի՝ Երևանի նահանգի՝ ամեն բանից զուրկ ու կարօտ թեմական դպրոցի աշակերտներից։ Մթթէ չէր կարելի այդ գումարը նոյնպէս նուիրել հայկական մութ աշխարհում լոյս, լոյս ու լոյս սփռելու գործին։

Սրանք նոյնպէս արձաններ են, միայն աւելի բարձր, աւելի արդիւնաւէտ ու անձեռագործ արձաններ։

Իսկ եթէ Միութիւնը ուզում է դրանով ապացուցել, որ հայ ժողովուրդն էլ կարող է մեծ ազգերի պէս իր մեծ որդիներին արձաններ կանգնեցնել, այն ժամանակ մենք սրտի կսկիծով կասենք, որ այս անգամ էլ հշտվեցին դառնացած բանաստեղծի (Ռ. Պատկ.) խօսքերը.

«Սուտ պարծանքը հայերի խելքն է տարել»։

Ես լսում եմ Աբովեանի ձայնը, որ ասում է խոժոռադէմ։

«Միթէ ձեր որդիները հայ խնդրեն, դուք քար կը տաք նրանց։ Գաւառը լոյս է խնդրում ձեղանից, դուք արձան էք տալիս նրան»...

Թադ. Աւդալբեգեան

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ *)

(Նամակ խմբագրութեան)

—

Այս իրաւունքները ճանաչել են բոլոր պետութիւնները հին ժամանակներից մինչև այսօր, և, սահման դնելով նրա քաղաքական ձգտումներին, եթէ երբևիցէ արտայայտվել է, լիակատար ազատութիւն են տուել նրան իր հօտի եկեղեցական և ազգային բոլոր խնդիրները անօրինելու, և յարգել են նրա միջնորդութիւններն ու դիմումները այս մասում։ Բոլոր պետութիւնների հետ կաթողիկոսը յարաբերութիւն է ունեցել իբրև հայ եկեղեցու գլուխ, և քանի որ հայ եկեղեցին միացած է հայ ազգի

*) Տես «Մշակ» № 263.

հետ, ուստի և իբրև ազգի գլուխ և ներկայացուցիչ։ Եթէ այսպիսի յարաբերութիւնները կարելի է անուանել քաղաքական գործ, ապա ուրեմն հայոց կաթողիկոսն ունեցել է և ունի քաղաքական իրաւունքներ, բայց միայն մեր բացատրած մտքով։

Եթէ այսօր շատերը պնդում են ընդհանուր խօսքերով, թէ հայոց կաթողիկոսն ունի քաղաքական իրաւունք և նշանակութիւն, կը նշանակէ չեն ըմբռնում այն պայմանները, որոնց մէջ ապրում է հայ ժողովուրդը, և տեղեակ չեն նրա պատմութեանը։ Բացի այս, ընդհանուր եկեղեցու վերաբերեալ մի մեծ սկզբունք նրանք մոռանում են։ Ամբողջ միջին դարերում պետութիւնները կռիւ են մղել եկեղեցական իշխանութեան հետ, աշխատելով սահմանափակել նրա միջամտութիւնը պետական գործերին։ Նրանք ձգտել են բոլոր պետական գործերը իրանց՝ պետութեանը սեփականել, իսկ հոգևորականութեանը թողնել զուտ հոգևոր գործերը։ Հռոմի պապը իր միջազգային մեծ նշանակութեամբ հանդերձ այսօր իրաւունք չունի միջամտելու այն պետութիւնների քաղաքական գործերին, որոնց իշխանութեան ներքոյ ապրում են հաւատացեալ կաթոլիկները։ Իտալիան, Սպանիան, Աւստրիան և Ֆրանսիան ամենևին հաշիւ չեն տալիս պապին, թէ ինչ օրէնքերով են կառավարում իրանց հպատակ կաթոլիկներին, և պարտական չեն նրա միջնորդութիւնները յարգելու։ Պապը իրաւունք ունի ձայն բարձրացնելու այն դէպքում, երբ վնասվում են կաթոլիկ հաւատքի կրօնական, եկեղեցական շահերը։ Եւրոպայում քաղաքական իշխանութիւնների և հոգևորականութեան ընդհարումները առաջ են բերել այն մեծ շարժումը, որ կոչվում է եկեղեցին բաժանել պետութիւնից, մի սկզբունք՝ որին անշուշտ պաշտպան կը հանդիսանան հէնց նրանք, որոնք այսօր կաթողիկոսի նշանակութիւնը գլխաւորապէս քաղաքական են համարում։

Եթէ երբևիցէ հայ ժողովուրդն իրաւունք ունենայ ինքնօրէն կերպով տնօրինելու ոչ միայն եկեղեցական, այլ և իր հասարակական գործերը, եթէ նա անկախ քաղաքական մարմին կազմէ, անկասկած թոյլ չի տայ, որ կաթողիկոսը, իբրև եկեղեցու պետ, միջամտէ պետական, հասարակական գործերին, ունենայ որևէ քաղաքական իրաւունք։ Այս երևոյթը տեղի է ունեցել երբեմն Հայաստանում. քաղաքական իշխանութիւնը ձգտել է սահմանափակել կաթողիկոսի իրաւունքները և թուլացնել նրա ազդեցութիւնը։ Ներկայումս, որքան էլ փափուկ պայմանների մէջ լինի հայ ժողովուրդը, իրողութիւնն այն է, որ կաթողիկոսը քաղաքական իրաւունքներ չունի։ Թերևս ինչ-ինչ տեսակէտներից ներկայ պայմաններում անյարմար համարվի այսպիսի կարծիք յայտնել, սակայն ճշմարտութիւնն ամենից առաջ է և ամենից բարձր։ Մեզ համար օգտակար է բաց աչքով տեսնել իրականութիւնը և մոլորութիւնների մէջ չը խարխափել։

Մ. ք. Ղազարեան

Պետերբուրգ

ՖԵԼԻԵՏՕՆ

Ի ԶՈՒՐ

—

Ի զուր աշխատանք։

Մեր երկար չարչարանքը բոլորովին ի զուր անցաւ։

Էլ բառարան, մառարան, էլ էջմիածին ու Թանգարան, էլ Թիֆլիս ու Պոլիս չը մնաց, ամեն տեղ տակն ու վրա արինք, յայտնի հայադէտներին դիմեցինք... ի զուր, բան չը դուրս եկաւ։

Պնդում, հաստատում էին, որ տակտ խօսքը հայերէնում չէ կարող լինել, որ տակտը ինչպէս օտար ու խորթ մի խօսք, տակտ էլ պէտք է ասել,—կը հասկանանք թէ չէնք հասկանայ—այդ շատ էլ ցաւ չէ։

— Ի՞նչպէս թէ չէ կարող լինել. տակտն էլ խօմ շատը չէ, որ միայն Թուրքերին տային, կամ նախանձի հանքը չէ, որ «չուզողութեան» սիրահար հայերս վերցնէինք... կապալով ու «փոդրաթով»։

— Երբ հայերը, իրանց պատմական անցեալում տակտի մասին գաղափար չէն ունեցել, էլ ո՞րտեղից էին կարող տակտ բառը ունենալ։

Ոմանք էլ ասում էին.

— Որքան Իսլանդիայում ուղտին և Նոր-Զելանդիայում մեր կանաչ տաքտեղին կարող են ծանօթ լինել, այնքան էլ մեզնում տակտը կը լինի ծանօթ։

— Բայց այդ, պարոննե՞ր, զրպարտութիւն է, այդ վիրաւորանք է մի ամբողջ ազգի հասցէին. մի՞թէ հաւատալու բան է, որ չորս հազար տարի գոյութիւն ունեցող ազգը առանց տակտի է ապրել։

— Իսկ մի՞թէ հալածանքը, երկրէ-երկիր թափառելը, հայի վարած կեանքը, զրկանքը ու տառապանքը դու ապրել ես համարում,—պատասխանում էին այս և այն կողմից։

— Ուրեմն, ձեր ասելով, հայը մինչև այսօր էլ տակտի մասին հասկացողութիւն չէ ունեցել։

— Զունենալը մի՞թէ եղջիւրաւոր, պոզաւոր կը լինի։ Փաստեր, օրինակներ էք ուզում. ինչքան կամենաք, ահա,

Համեցէք.

— Եթէ մենք հայերս տակտ ասած բանի հասկացողութիւնն ունենայինք, Պոլսում, պարբերական թերթերում, Բաֆֆիի վէպերը կը տայինք կարդալու... քաւութեան, ներողութեան, փոխադարձ սիրոյ և համերաշխութեան օրերում։ Կամ հին մեր զինանշաններով, հայկական բռնակալների մեծ ու նշանաւոր մի՞թէ քթերը հանդէս կը բերէինք պատկերներով... կասկածն ու երկիղը մեծացնելու... յօգուտ բէակցիայի։

Եթէ տակտի քիչ ու շատ գիտակցութեան շնորհը ունենայինք, մենք, «կեցցէ»-ներով ազատութիւն ազաղակողներս, նորածին սահմանադրութեան շեմքում, ազատութեան թիւրք պաշտպաններին կուղղէինք մեր բռունցքը։

Կամ սահմանադրականների «կողք ու ճաղերը» փշրելու ընդունակութեամբ կը հաստատէինք անձեռնմխելիութեան մեր յարգանքը... երբ Օրմանեանի դէմ արգելք էին հանդիսանում մեր խուժանականներին։

Գոռալ ազատութիւն, պահանջել անձեռնմխելիութիւն, և միաժամանակ բռունցք ներով գործ դնել բռնութիւն,—այս է նշանակում տակտի գիտակցութիւն...

Քամու ջրաղացներ չեղած տեղում, ապագայում լինելիք ջրաղացների դէմ՝ այժմեանից ասպետ Դոն-Քիշոտի գէնք ու զրահը հագնել, Բոսսինտոնի վրա հեծած՝ յանուն բանւորական գեղեցկատեսիլ Դուլցինէի՝ տէզը թիւրք Սապահ-Էդդիններին ուղղած, մեր Սապահ-Փիլեանների սպառնանքն է հայկական տակտը։

Դեռ թողնենք, որ այդ սպառնանք համարվող Բալախանեան գնդից այսօր կէսն էլ չէ մնացել... միմեանց ջնջելուց, բանտերը լցնելուց և կրած զրկանքներից յետոյ։

Տակտ ունեցողներս, Թիֆլիսում, Փոխարքայի «ժամանակաւոր կանոնները» օրինաւոր վաղդ կը համարէինք... ընտրվելիս, իսկ նոյն կանոնների հրաժարվելու պահանջը՝ ապօրինի և վտանգաւոր—փուշ կանուանէինք... հրաժարվելու վտանգից։

Ընդունենք, թէ այս վայնասուն պաշտօնում մնալու փորացաւ չէ. բայց մի՞թէ այս գործելակերպը ունի փաստաբանութիւն, կամ խօսք, որ ունենայ տակտի նմանութիւն։

Վերցնենք օրի ակի համար հէնց էջմիածինը։ Եթէ այդտեղ էլ տակտին գին ու արժէք տալ գիտենային՝ Մարքի պէս թանգագին հիւրին «ներողութիւնը» թողած, կուշտ «անկարող եմ»-ով կը պատուէին... Բայց ո՞ր մէկն ասել։

Ճիշտն ասած, ինձ լաւ էր յայտնի, որ էջմիածնում, կենտրոնական յայտնի համաժողովից յետոյ տակտի հոտն էլ չէր մնացել, բայց չը գիտէի, որ վեհարանից վայելուչ պատասխանի «տօնն» էլ է փախել։

Վերջը այն համոզման եմ գալիս, որ այս մեր ընթացքը, եթէ քիչ էլ շարունակվի, օտարները, մեզ փոխանակ հայ ժողովուրդ կոչելու, պիտի ասեն.

«Ան-տակտ ժողովուրդ»։

Կարիճ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—

✦ Նոյեմբերի 8-ին օսմ. պարլամենտի երկրորդ կարգի ընտրողների ընտրութիւնը շարունակվում էր Կ. Պոլսի Կում-Կափու թաղում։ Ընտրութիւնը կատարվում էր Մայր-Եկեղեցու խորհրդարանում։ Քուէարկութեան գործողութիւնների կանոնաւորութեան վրա հսկում էր մի խառն քննիչ յանձնաժողով՝ բաղկացած հայերից և թիւրքերից։ Խորհրդարանի շուրջը հաւաքվել էր մի հոծ բազմութիւն թիւրքերի և հայերի։ Իզմիրլեան սրբազանը ևս, իբրև Կում-Կափուի ընակիչ, մասնակցելու էր ընտրութեանը։ Ընտրողական ժողովի անդամները՝ արծաթէ ափսէում դրած՝ քուէթուղթը մատուցել են պատրիարքին, որ գտնվում էր Երուսաղէմատանը։ Սակայն Իզմիրլեանը պատասխանել է, որ ինքը, իբրը քաղաքացի, պարտաւոր է զգում իրան՝ անձամբ ձգել իր քուէն քուէտուփը։ Ապա անմիջապէս վերարը գլուխն է դրել և իր հետևորդներով գնացել է ընտրութեան վայրը, իր քաղաքացիական պարտքը կատարելու։ Առիթից օգտվելով՝ պատրիարքը ասել է հետևեալը. «Հրաւիրած էիք, որ քուէս նամակով ղրկեմ։ Բայց ես իբրև այս երկրին զաւակը և իբրը ամեն մարդէ աւելի օրէնքին հպատակող անհատ մը՝ փութացի անձամբ բերել դայն։ Հոս հաւաքուող հայ և թիւրք թաղեցիներու այս եղբայրական համերաշխութիւնն ամեն դնահատումէ վեր է և իրաւունք կուտայ ամենուս ալ յուսալու, թէ այսչափ անկեղծ սիրոյ վրայ հիմնուած սահմանադրութիւն մը իրաւունք ունի տեւական ըլլալու։ Մաղթենք, որ բարձրեալն Աստուած ամենուս ալ շնորհք և կարողութիւն տայ, որ գիտնանք մեր այս ազատութեան յարգը, և այս օսմ. երկիրը բարգաւաճել, շէնցնել, որ անոր յառաջդիմութեանը սատարել ըլլայ մեր ամենուս ալ իղձը»։ Այս խօսքերից յետոյ՝ պատրիարքը, խանդավառ ու բուռն ծափերի տակ, իր քուէն ձգել է քուէտուփը։ Ընտրութեանը ներկայ գտնվող կառավարական ներկայացուցիչներից Ֆուատ Շիւքրի-բէյ, ի պատասխան պատրիարքի արտասանած խօսքերի, հետևեալն է ասել, խօսքն ուղղելով Իզմիրլեանին. «Դուք, իբրև մի անձնաւորութիւն, որ յարգանքն է վայելում բոլոր օսմանցիների և ազատութեան ամենաջերմ պաշտպաններից մէկն է, այսօր բարեհաճել էք անձամբ բերել ձեր քուէն ու քուէտուփը ձգել։ Ձեր այս ընթացքը մի անգամ ևս շեշտում է այն, որ զուք ճշմարտապէս ըմբռնել էք ազատութիւնն և ամենաջերմ պաշտպանն էք սահմանադրութեան։ Հայ ազգը, ձեր սրբազնութեանն ընտրելով իրան գլուխ ու պատրիարք, անձամբ ցոյց տուեց, թէ որքան գնահատում է ազատութիւնը և սահմանադրութիւնը։ Մենք ևս, մեր հայ եղբայրների հետ միասին, իբր պետ տեսնելով ձեր սրբազնութեանը, ոչ միայն սրբատանց հրաւում ենք, այլ և հպարտանում ենք։ Օսմանեան սահմանադրութիւնն իր ջերմ պաշտպան պետերի շնորհիւ միայն կարող է ապահովել իր բարգաւաճումն ու տալիք օգուտները։ Թող Աստուած ձեզ երկար կեանք շնորհի, որպէսզի տեսնէք այս երկրի բարեկեցութիւնը, առաջադիմութիւնը և նախանձելի վիճակը»։

✦ Ռոդոսթոյից նոյեմբերի 3-ին հաղորդում են, որ օսմանեան պարլամենտի անդամ Ռոդոսթոյի կողմից ընտրված են մի թիւրք և մի հայ՝ Ադիլ-բէյը և Յակոբ էֆ. Պապիկեանը, երկուսն էլ արհեստով փաստաբան։ Սա, ուրեմն, օսմանեան պարլամենտի համար երկրորդ հայ անդամն է, որ ընտրվում է։ Ինչպէս յայտնի, օսմ. պարլամենտի առաջին հայ անդամը, որ ընտրվեց Սսի շրջանից, Սասունի յայտնի հերոս Համբարձում Պոյաճեանն էր (Մուրադ)։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

26 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգական դատարանը «Слово» լրագրի նախկին խմբագիր-հրատարակիչ Պէրցօվին, որ մեղադրվում է մամուլի մէջ Զերնօմորի նահանգապետ Տրօֆիմօվին զրպարտելու գործում, դատապարտեց 7 օրով անային բերդարգելութեան։

ՐԻԳԱ։ Բացվեց ռուսական երկաթուղագծերի ինժենէրների համագումարը։ Մասնակցում են 500 հոգի։

ԿԻԵՎ։ Քաղաքային դուման հաւանութիւն տուեց 300,000 ռուբլի գումարի փոխառութիւն կապելու քաղաքային լոմբարդ հաստատելու համար, ըծաւոր տիֆի դէմ կռուելու համար յատկացնել 15,000 ռ. և 5,000 ռուբլի էլ բժշկական մարմնի ապահովագրութեան համար։

ՕԴԵՍՍԱ։ Հիւսիսային նաւագնաց ընկերութիւնը յատուկ գծեր է հաստատում դէպի Աղեքսանդրիա՝ շաքարի արտահանութեան համար։ Նաւերը մտնելու են նաև թիւրքական նաւահանգիստները։

ՎԻԵՆՆԱ։ Սլաւօնական հետևեալ համագումարը տեղի կունենայ Վարշավայում 1909 թ. յունվարի վերջերը։ Պրագայի սլաւօնական համագումարի արձանագրութիւնները վճռված է տպել այն լեզուներով, որոնցով արտասանվեցին ճառերը, նաև ընդհանուր աշխատանքների առաջարանը հրատարակել սլաւօնական բոլոր լեզուներով։

Կայսրը այցելեց ծպտեալ կերպով տեղս եկած դանիական թագաւորին։ Թագաւորը փոխ-այցելութիւն արեց Հօֆբուրգում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒՎԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

Գրախանութը խնդրում է իր կլիենտներին, որ իրանց ՀԱՍՑԷՆԵՐԸ ՄԻՇՏ ՊԱՐԶ ԳՐԵՆ (Նրանք որ տպած բլանկներ չունեն)։ Նոյնպէս և գրախանութին ուղղված թղթակցութիւնները և այլն ուղղել հետևեալ պարզ հասցէով, Тифлисъ, Г. И. Галустяну, Книжный магазинъ «Гуттенбергъ»։ Ցաճախ է պատահում է, որ հասցէները սխալ են գրում, որով և գործը դժուարանում է։

Գրացուցակը ուղարկվում է ձրի։

(Հ. ու.) 2—2

ԲԺԻՇԿ

Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ

Ներքին եւ ջղային հիւանդութիւններ, առանձնապէս սրտի և թոքերի հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը՝ 11—1 ժ. առաւօտեան, 5—6 ժ. երեկոյեան։
Մօլօլակովայա փ. № 6. տ. Միրզոյեվի
(օ. մ.) 50—7

ԲԺԻՇԿ

Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ

Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Վելիամինովսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—21

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։
Հիւանդների ընդունելութիւնը { 12—1 առաւօտեան 5—6 երեկոյեան
Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձէի։
100—62

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի և ատամի հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է ոսկու, արծաթեայ, ֆարֆորի և այլ տեսակ պլօմբներ։ Արհեստական ատամներ ոսկու և կաուչուկի վրա։ Կարինետին կից արհեստական ատամների լաբօրատօրիա։ Խորհուրդը ձրի։
Ընդունելութիւն { 9—2 ժ. առաւօտեան 4—7 ժ. երեկոյեան
Шелковниковская ул., № 8, ոչ հեռու Աբաս-Աբադսկայա հրապարակից։
(շ. կ. չ.) 25—8

ԿԵՆՏՐՕՆԱԿ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ
վաճառվում են
հանդուցեալ վիպասան
ՄՈՒՐԱՑԱՆԻ
(Գր. Տէր-Յովհաննիսեանի) երկերի ժողովածուի մնացած սակաւաթիւ օրինակները. գ. 1 ր. 50 կ., վայելուչ կազմով 2 ր.։ Գումարով գնողներին սովորական զեղչ է լինում։ Գրավաճառներին առանձին համաձայնութեամբ։ Օտար տեղերից դիմել. Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ.
(Հ.) ապ. 10—3

Կարճ ժամանակամիջոցում և մատչելի պայմանով պատրաստում եմ ծխական դպրոցների ձայնագրութեան ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և եկեղեցական երգեցիկ խմբերի ԽՄԲԱՊԵՏՆԵՐ։ Դիմել՝ Абасъ-Абадская пл. 2-ой Могнинскій тупикъ № 4, кв. Асламазова, Ռոմանոս Մելիքեանին։
(օ. մ.) 5—5

1865 թ. 1870 թ. 1882 թ. 1896 թ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

1860. Т.Р.А.Р.М. С.ПЕТЕРБУРГЪ.

Իսկականները միայն այս դրոշմով

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ
ԸՆԿ. Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ԼՐԻՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ
լաւ յատկութեան համար

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՐԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ
ՎԻԼՆԱՅՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՐՈՍՏՕՎՈՒՄ Դ.Վ
ԿԱԶԱՆՈՒՄ
ՎԼԱԴԻՎՈՍՏՕԿՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԷՆՏՈՒՄ
ՍԱՐԱՏՕՎՈՒՄ

Նիժեգօրօդեան և Իրբիտեան տօնավաճառներում

50—33



ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԵՕՊՕԼԴ ՆԷՅՇԵԼԼԵՐ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
(Ե. ու.)

Электропечатня Н. Г. Аганьянцъ
Полицейская. 7.